



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

23662

ԲՃ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

VII *Հայ*



ՈՒԹՃԱՄԵԱՅ

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՕՐ



Ս. ՊԵՏԵՐՅԱՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ. ԼԵՂՏՈՒԳՈՎ, 4  
1907

331.81

F-91

ՄԵՐ ԷՃԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՐԱՏ. ՏԻՎ. ՉԱՐԵԼԻ

1. Քարը երգում է	10	4
2. Ճշմարիտ մեծութիւն	7	"
3. Արդար ծերունին	10	"
4. Մեծ տօն	10	"
5. Նոր լոյս	10	"
6. Ուսման սերը	7	"
7. Մանկան ծօռ և վերջին խօսք	7	"
8. Չքնաղ Մարօն	5	"
9. Մաթեօ Գալիօնէ (Լրտես)	7	"

ԴիՄել՝ Թիֆլիս Կենդրոնական և Գոտտենբերգ գրախանութներին.

Բացուած է բաժանորդագրութիւն 1907 թ.

== Հ Ա Ս Կ Ե Ր ==

Մանկական պատկերազարդ ամսագրի:

Գինը 4 ռ.

Հասցէն՝ Թիֆլիս, Բէհրուժեան փողոց, № 25.  
Խմբ. հրատ. ԿՍՏ. ԼԻՍԻՑԵՍՆ

1907 թ.

„ՆՈՐ-ԱՃԽԱՏԱՆՔ“

Ժողովրդական-հասարակական-տնտեսական

Չ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

«Նոր-Աշխատանքը» նուիրուած է լինելու հայ աշխատաւոր զիւղացիութեան և զիւլական պրօլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը:

«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժաժորգներին տալու է ծրի չորս-գիրք՝ նուիրուած զիւղանտնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին:

ԲԱՃՆԵԳԻՆԸ — Ռուսաստանում. Տարին՝ 4 ռ. կէս տարին՝ 2 ռ. 50 կ.

Հասցէն՝ Թիֆլիս, Բէհրուժեան փող. № 50.

Խմբ.-հրատ.՝ Վիրգինէ Աթանասեան

11 MAR 2013  
5 JAN 2010  
Գրադարան

300  
1184-ԲՈՒ

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒԴԵԱՆ

918 հմայ (ս.ս.)

331-21  
Բ-91  
ար



ՈՒԹՃԱՄԵԱՅ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՕՐ

1003  
11538

1. Նօրմալ բանւորական օրը պէտք է հաստատել օրինական ճանապարհով: 2. Օրէնքները, առհասարակ, պէտք է մշակեն ժողովրդի ներկայացուցիչները ընդհանուր ընտրողական իրաւունքների հիման վրայ: 3. Սօցիալիզմը միակ վարդապետութիւնն է, որ ցոյց է տալիս կատարեալ հաւասարութեան ու ազատութեան ուղին և նրանց իրագործման միջոցները: 4. Կեանքի վատաոողջ պայմաններ, ութժամեայ բանւորական օր և առողջապահութիւն: 5. Այլասերունձ:



Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԵՐԱ  
1906

23662

„Пушкинская Скоропечатня“ С.П.Б. Лештуковъ пер. 4.



Մուրճի, Արօրի և Մաքի միութիւն:

Հրատ. քժ. Ա. Բուդուղեանի

## ՈՒԹՃԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ.

Որովհետեւ բանուորական օրուայ երկարութիւնը վատ է ազդում աշխատող մասսայի առողջութեան վրայ, անհրաժեշտ է կռիւ մղել նօրմայ բանուորական օր սահմանելու համար:

Իացի այն, որ նօրմայ բանուորական օրը կրպահպանէ բանուորի ֆիզիքական և հոգևոր ոյժերը, կրարձրացնէ նաև նրա քաղաքական և տնտեսական նշանակութիւնը: Ցաւալի է, որ չկայ քաղաքական ազատութիւն ու իրաւունքներ և այդ պատճառով անկարելի է օրինական ճանապարհով բանուորական օրը միանգամայն կրճատելով դարձնել ութժամեայ:

Դեռ 1905 թուի հոկտեմբերին, Պետերբուրգի մի քանի գործարաններում իրանք բանուորները չեղափոխական ճանապարհով սահմանեցին ութժամեայ բանուորական օր և առաջուայ նման շարունակում էին պահանջել նրա վաւերացումը օրինական ճանապարհով, բայց ոչինչ դուրս չեկաւ: Իրա համար էլ բանուորները ամենից առաջ պիտի հողան, որ քաղաքական իշխանութիւնը պատկանի ամբողջ ժողովրդին, օրէնքները հրատարակուեն ժո-

ղովրդից ընտրուած ներկայացուցիչներէից հաւասար, ուղղակի և զազանի ձայնատուութեան հիմքերի վրայ: Միմիայն այն ժամանակ կարելի է իսկական ազատութիւնը ապահովուած համարել:

Միայն այն ժամանակ բանուորների ձեռք բերած օրէնքները կտան ցանկալի օգուտ և կապիտալիստների գիշատիչ ձգտումները որոշ չափով կսահմանափակուեն:

Ներկայ կեանքի բարւոքման համար միակ անհրաժեշտ և փոքր ի շատէ չուսալի միջոցը հանդիսանում է քաղաքական իրաւունքներ ունենալը:

Եւ ահա ութթամեայ բանուորական օրը ոչ թէ միայն կբարւոքէ բանուորների զրութիւնը ներկայումս, այլ և կբանայ նրանց համար լայն ճանապարհ դէպի այն մեծ ապագան, ուր գոյութիւն չի ունենայ ոչ ճորտութիւն և ոչ էլ ձնշում, որը կայէնի կնիքի նման զրոշմուած է ամբողջ աշխատաւոր դասակարգի ճակատին և կգտոնայ ուժեղ գէնը կռիւ մղելու այդ ապագայի համար:

Եւ իրաւ, աշխատանք՝ առանց միխթարութեան, ընտանիք՝ զուրկ բախտից, կեանք՝ առանց լոյսի—ահա ժամանակակից բանուորի դասն բաժինը:

Փռան ալտոտ և խոնաւ ներքնատնում, կոշկակարի արհեստանոցում, նաւախորշում ստորերկրեայ սև հանքերում, նաւթահորերում, գործարանների անիւների մէջ—ամեն տեղ, անչափ հարստութեան այս ստեղծագործողը աղքատութեան ձորան է:

Դեռ մանկութիւնից նա ապրում է միմիայն ցնորքներով և երազներով:

Փողատիրոջ շարժուն անիւր, ամենափոքր հասակից սկսած խելով նրան հալրական տնից, դրնում է սոսկ իրականութեան առաջ, որը տանում է նրան դէպի վաղաժամ հիւանդութիւն, անապահով ծերութիւն, անգործութեան սարսափ, անժամանակ մահ որևիցէ դժբախտ դէպքից—կամ գործարանում, կամ զինուորի գնդակից, որը ուղարկուած է իշխանութիւնից գործադուլը դադարեցնելու համար:

Սակաւահող անկիրթ գիւղացին, արհեստաւորը, գործակատարը տառապում են քաղցից, հիւանդութիւններից, մերժաւոր ու ստորին և բարձր իշխանութիւնից:

Այնտեղ, որտեղ գիւղացին խարխափելով որոնում է հաց ու հող, աղատութիւն ու լոյս, նա պատահում է չինովնիկական ձանձրացնող ձղձգումներին, ընկնում է այդ խորամանկ անցորդի աշխարհակալ բռունցքի ճանկը, իսկ եթէ չանկարծ մէկը փորձում է նրան օգնել և ուղղել դէպի շիտակ ճանապարհը, իսկոյն և եթ ձերբակալուում է: Ընչել ժողովրդական մասսան մինչ այն աստիճան, որ նա հնարաւորութիւն չունենայ հասկանալ իր զրութիւնը, բարեփոխելու վիճակը—մղել մի ազգութիւն ընդդէմ միւսի, երբ նոցա սիրար լի է չուսահատութեամբ ու չուզմունքով և այդպիսով հագեցնել իր վրէժխնդրութեան ծարաւը,—ահա թէ ինչպէս էր մեր կառավարիչ իշխանութեան քաղաքականութիւնը:

Բայց մօտ է արշալոյսը:

Ազատութեան սերմերը դանդաղ կերպով աճում են:

Աշխատաւոր մասսայի գիտակցութիւնը խեղդուած տղիտութեան վնասակար բոյսերով, ծանրաբեռնուած օրուայ մանր-մունր կարիքով, ճրնշուած կամայականութեան լծով, թէև ուշ, բայց և այնպէս մի օր հզօր կերպով ոտքի կկանգնի:

Կարիքը և իրաւագրկութիւնը աւելի ամուր կապերով կմիացնեն մարդկանց միմիանց հետ, քան հարստութիւնը և իշխանութիւնը: Միանալով միմիանց հետ ընդհանուր բռնութեան գիտակցութեամբ, նոքա կգտնեն ոյժ, կռիւ մղելու բաղձալի ապագայի համար:

Մերթ աշտեղ, մերթ այնտեղ պայթում են կայծեր: Արդէն ամենուրեք տարածւում է այն միտքը, թէ միութեան մէջն է ոյժը, կռուի մէջ է իրաւունքը, լրսւում են նոր երգեր, նրանց մէջ հնչում է մարտական կոչը, նա ողևորում է մարտնչողներին, բոլորին հրաւիրում է աշխատանքի զրօշակի տակ, լուսաւորում է ճանապարհը դէպի յաղթութիւն:

Ց ժամեայ աշխատանք, Ց ժամ քնի համար և Ց ժամ էլ ազատ:

Բժ. Ա. Բ.

1906 թ. 25 նոյեմբ.

Ա.Պետերբուրգ.

Ա.

Ի թիւս այն պահանջների, որը բանուորները ներկայացրել էին բազմաթիւ գործադուլների ընթացքում անցեալ տարի և նրանից առաջ, միշտ գոյութիւն է ունեցել ութժամեայ բանուորական օրուայ ներմուծման պահանջը:

Հաւատացնում են, որ այդ պահանջի կարիքը արդէն թափանցել է ռուս բանուորի գիտակցութեան մէջ նոյնպէս, ինչպէս որ նա դառել է նշանարան (յօդունդ) նրա արեւտեան Եւրոպայի եղբայրակցի համար:

Վաղ թէ ուշ, հէնց որ արտադրութեան տրնտեսական պայմանները թույլ կտան, այդ պահանջը կմտնի կեանքի մէջ:

Մեր ձախակողմեան կուսակցութիւնները խոստանում են բանուորներին՝ սահմանել ութժամեայ բանուորական օր: Սահմանադիր-ռամկալարական կուսակցութիւնը անյապաղ ցանկանում է անել նոյնը ամենուրեք, ուր որ ներկայումս կարելի է:

Շատ վէճ, շատ չարչարանք և շատ արիւն է թափուած ութժամեայ բանուորական օրուայ համար:

Միմիայն շահադրդուած և գործին նուիր-

ուած մարդկանց փոխադարձ բացատրութեամբ կարելի է, մեր կարծիքով, լուսաբանել ճշմարտութիւնը:

Եթէ աշխատանքի ժամերի կրճատումը առաջ կբերէ հասարակութեան համար մի որևիցէ նիւթական կորուստ, այդ կորուստը կլինի միմիայն տոկոս ստացողների համար: Այստեղ աւելորդ չի լինի առաջ բերել յայտնի Շուլց չեվերնիտցի խօսքերը. «տեխնիքական յառաջադիմութիւնը դանդաղ է ընթանում այնտեղ, որտեղ վաստակը բաւականի մեծ է և մշտական»:

Մի պետութիւն ընդհանուր ընտրողական իրաւունքով, որպիսին յուսով ենք կլինի նաև Ռուսաստանը, որի ինքնավարութեան զործին պիտի մասնակցեն նաև բանուորները, այդպիսի պետութեան մէջ բանուորական օրուայ կրճատումը քաղաքական անհրաժեշտութիւն պիտի դառնայ:

Ի՞նչպէս կարող է բանուորը, որը կոչուած է սահմանադրութեան կողմից լուծելու ամենադժուար հարցերը, հարկաւոր չափով օգտուել իր իրաւունքներից, եթէ նա ժամանակ չունի համապատասխան կրթութիւն ստանալու:

Ի՞նչպէս կարող է բանուորը տրամադիր լինել զէպի ընտանեկան կեանքը, տնասիրութիւնը և մարդուն արժանավայել բնակարանը, որը թողնում է վաղ առաւօտեան և վերադառնում ուշ գիշերը:

Ո՞րտեղ և ե՞րբ աշխատաւոր մասսան մեղանում հնարաւորութիւն ունի կազմելու մի միութիւն, որը, որպէս հզօր ֆակտորներից մէկը, մեր-

ձեցնէ զանազան ազգութիւններ միմիանց հետ ընդհանուր աշխատանքի հողի վրայ, դիպուբ Հէնց ապագայ հալ-թաթարական, հալ-վրացական ընդհարումներից խուսափելու նպատակով:

Միմիայն բանուորական օրուայ կրճատումը հնարաւոր է դարձնում այն, որ բանուորը որոշ չափով բաժին ստանայ ժամանակակից կուլտուրայի բարիքներից և մօտեցնէ նրան մարդկային զարգացման գաղափարական նպատակին:

Թէ ի՞նչ տեսակ է մեր ներկայ կարգը, այդ իմանալու համար բաւական է լիշել 17 հոկտեմբերի երևելի հրովարտակը, որը դատապարտեց այդ իրաւակարգը...

Եւ իրաւ, բոլոր բարիքները վայելում է միմիայն ժողովրդի մի փոքր մասը, որը մտածում է օրըստօրէ աւելացնել իր հարստութիւնը: Իսկ աշխատող, չարչարող միլիօնաւոր մարդիկ տառապում են և քաղցից և տգիտութիւնից, տանում են դաժան ճնշումը և ապրում այն նախապաշարմունքներով, որոնք ամրապնդում են նրանց նորութիւնը:

Եթէ անցնենք մասնաւորին, մենք կտեսնենք, որ արդիւնաբերութեան մէջ անհրաժեշտ առարկաներ արտադրելու համար աշխատող ոչժր պահասում է, այն ինչ թանկագին և անօգուտ առարկաներ արտադրում են մեծ քանակութեամբ:

Միլիօնաւոր ազքատ բանուորների որդիքը շոր չունեն հազնելու, իսկ խանութներում առասպելական արժէքով ի ցոյց են դրուած թանկագին

իրեր, որոնց պատրաստութեան համար հազար բան-  
ւորական օր է գործ դրւած:

Բանուորի օրավարձը չի բաւականանում ամե-  
նաանհրաժեշտ պիտոյքներ գնելու համար, իսկ նրա  
շուրջը ապրողները, որոնք ոչինչ չեն շինում, վատ-  
նում են ահագին փող:

Ճորտութիւնը կորստաբեր դարձաւ հին դա-  
րի համար: Ժամանակակից հասարակութիւնը նոյն-  
պէս կկորչի, եթէ մեծամասնութեան տառապանքի  
առաջը չառնուի, եթէ շարունակ մտածելու լինի,  
որ բոլորը պէտք է աշխատեն և զրկանքներ կրեն  
մի քանի մարդկանց ճոխ ապրելու հնարաւորու-  
թիւն տալու համար, այժ, նա կկորչի, եթէ չի  
ցանկանայ հասկանալ ժամանակակից կեանքի կար-  
գերի խստութիւնը:

Բռնութիւնը և խստութիւնը միմիայն կշտա-  
պեցնեն «պայթումն», ճշմարտութիւնը վերջ ի վեր-  
ջոյ կլաղթանակէ, բայց որքան շուտ, այնքան  
լաւ:

Բանուորն է, որ ծնւում է դառն աղբատու-  
թեան մէջ, մեծանում սովածութեան մէջ, հագնում  
վատ, ապրում կեղտոտ բնակարանի մէջ: Բանուորի  
մանուկն է, որ աճում է առանց մօր խնամքի, որը  
ստիպուած է անջատուել իր զաւակից, գնալ նոյն-  
պէս աշխատելու, թողնելով մանկան հազար ու մէկ  
փորձանքի մէջ, որը ամեն մի բոլակ սպառնում է  
նրա կեանքին:

Եւ շատ յաճախ, հիւանդանալով ամենափոքր

հասակից, նա տառապում է ամբողջ կեանքի ըն-  
թացքում:

Հազիւ թէ նա դառնում է ութ-ից 12 տա-  
րեկան, հազիւ քիչ ոչժ է հաւաքում և նա պէտք  
է սկսի աշխատել: Իր ոչժից վեր գործեր նա պէտք  
է կատարէ վատաւոյճ արհեստանոցում, որտեղ նրա  
հետ վերաբերում են շատ խիստ ու կոպիտ, որ-  
տեղ նա մօլութիւնից և ախտից ի բաց, ուրիշ  
ոչինչ չի սովորելու:

Քսան ու մէկ տարեկան հասակում նրան կօ-  
չում են զինուորական ծառայութեան (այդ կօչը  
նրա սուրբ պարտականութիւնն է, որովհետև առ-  
այժմս, դժբախտաբար, չկայ ժողովրդական մի-  
լիցիա) նա կա՞մ պիտի մնայ փակ զօրանոցներում,  
կամ պիտի գնայ պատերազմ, որտեղ նա կարող է  
և սպանուել, չիմանալով նոյն իսկ, թէ ի՞նչ նպա-  
տակի համար էր նա կուռում:

Բանուորը ամուսնանում է \*) և ահա, երբ  
նա զաւակների տէր է դառնում, ըմբռնում է կա-  
րիքի բոլոր սարսափը—հիւանդութիւնները, թան-  
կութիւնը և անդործութիւնը:

Եթէ այդ կարիքից ստիպուած նա կլանդգնի  
պահանջել, որ իր օրավարձը աւելացնեն, այն ժա-  
մանակ նրան սպասում է բանտ, դատ, սովածու-  
թիւն, գնդակ և այլն:

Տանելով անթիւ զրկանքներ և վիրաւորանք,

\*) Անգղիացի Մալտուս-ը և ֆրանսիացի Գիւլատէլ-ը  
գտնում են, որ բանուորները չպէտք է ամուսնանան:

բանուորր քարչ է տալիս իր դժբախտ կեանքը սարսափելի ճիղ ու ջանք գործ զնելով: Իր չափահասութեան մէջ նա չի կարող չիշել ոչ մի մխիթարական մօմենտ անցած երիտասարդութեան մէջ և ահ ու վախով պիտի օպասի ծերութեան: Եթէ նա զուրկ է ընտանիքից, կամ եթէ նրա ընտանիքը անչափ աղքատ է, հէնց որ նա զրկուեց իր բանուորական ուժից, նա իր աղքատութեան և անպատան լինելու պատճառով կբանտարկուի և որպէս մի ոճրագործ կմեռնի բանտի մէջ:

Իսկ հարուստ ծնողների որպէն զեռ մանկութիւնից շրջապատուած է ճոխութեամբ և ամեն տեսակ խնամատարութեամբ: Իր մանկութիւնը նա անց է կացնում բաւականութիւններով և փաշփաշանքներով: Նրա երիտասարդութիւնը լի է գուարճութիւններով, եոխութիւնը, խաղը, քէֆը, ծախու սէրը—ամեն բան նրա համար պատրաստ է:

Կշտանալով ամեն բանից, նա ամուսնանում է: Ընտանիքը շրջապատում է նրան իր ուրախութիւններով, նա ստանում է աստիճան, ունի յարգանք, պարգևներ, նա չի վախենում ծերութիւնից. չէ՞ որ նա հարուստ է:

Այն ինչ այդ բախտաւորը երբէք չի աշխատել: Նա ամբողջ կեանքում գուարճանում էր իր 990/0 մեծամասնութիւն կազմող եղբայրների զրկանքներով:

Հարուստ գասակարգը մտածում է միմիայն իր մասին, բայց նրա մօտակաջ անկման նշանները

արդէն երևում են և նա գոնէ Հիմա պարտաւոր է, յօժարակամ, օգնութեան հասնել աշխատաւորին:

Եթէ լաւ դիտէք, դուք պարզօրէն կտեսնէք այն խոր ատելութիւնը, որը գոչութիւն ունի ներկայ իրաւակարգ պահպանող հարստի և լաւագոյն ապագայի նուաճմանը ձգտող աղքատի մէջ:

Բ.

Պիտի ասել, որ կազմելով «Միջազգային Ընկերութիւն», զանազան տէրութեան բանուորները վճռեցին առաջ տանել իրենց գործը՝ առանց մի որևիցէ բարեբարի նախածեռնութեան, այլ յուսալով միմիայն իրենց վրայ ձեռք բերելու լաւ ապագայ ընդհանուր ուժով համայն աշխատաւորների համար:

«Բանուորների ազատութիւնը պիտի կատարուի իրենց, բանուորների ձեռքով», այսպէս գրեցին նոքա իրենց կանոնադրութեան երեսին և անխախտ պահելով այդ կանոնը, ընդունում էին ընկերութեան մէջ ուրիշ գասակարգերից միմիայն այնպիսի մարդկանց, որոնք միանգամայն դառնում էին բանուորների կողմը և բանուորական գործի բարեկարգութիւնից զատ ուրիշ բան չէին ցանկանում:

Նոր ընկերութեան երկրորդ առանձնաչափութիւնը, որը մինչև այդ ժամանակ գոչութիւն չունէր ինչպէս վերևում չիշեցինք, կազմում է նրա միջազգայնութիւնը:

Երբ բանուորները հասկացան, որ բոլոր պետութիւնների մէջ նրանք տառապում են միակերպ, որ ամենուրեք նրանց թշնամիները միևնոյն դա-

սակարդին պատկանող մարդիք են, որ այդ մարդիք, ինչքան մեծ պայքար մղեն միմիանց դէմ, միշտ ընդդէմ բանուորների են, զանազան երկրի բանուորները վճռեցին համախմբուել և ընդհանուր ոչժերով ձեռք բերել բազմալի ապագան:

Գիտակից, իրենց դրուժիւնը ըմբռնող բոլոր արևմտեան պետութիւնների բանուորները, օրինակ գերմանացի բանուորները, իրենց սեպհական և ուրիշ գերմանացի տէրերին թշնամի են համարում, իսկ Ֆրանսիացի, անգլիացի և ուրիշ երկրների բանուորներին համարում են իրենց ընկերներ և եղբայրներ: Ռուսական բանուորներին նրանք նոյնպէս եղբայրների տեղ են ընդունում, հետևապէս, հայ, վրացի և ուրիշ բանուորներին: Նրանք հաստատ կերպով համոզուած են, որ երբ ռուսական բանուորները կըմբռնեն իրենց շահերը, այն ժամանակ կմիանան բոլոր երկրների բանուորների հետ և կռիւ կմղեն բոլոր աշխատաւոր մարդկանց ցանկալի ապագայի նուանման համար:

Ես ինձ թոյլ եմ տալիս ասելու, որ ազգութիւնը այստեղ զեր չի խաղում: Օրինակ, գերմանացին երբէք չի մտածում իր ազգային աւանդութիւնների մասին և դա շատ բնական է: Իսկ հայ բանուորը այդ աւանդութիւնները պիտի աչքի առաջ ունենայ, թէև յայտնի գերմանացի գիտնական Կաուցկի-ն պնդում է, որ ազգութիւնը նշանակութիւն չունի, որ մինը միւսին չի հակասում, բայց արդեօք այդպէս է մեղանում—հազիւ թէ:

Գուցէ վերջին պատմական ֆակտորները, սկը-

սած հայ-թրքական ընդհարումներից և ապագայ նմանօրինակները ցոյց կտան մեր աշխատաւոր ժողովրդին բնական ճանապարհ: Այդպիսի հարցերը կրում են լուրջ բնաւորութիւն. նրանց մասին մանրամասնօրէն կխօսենք միւս անգամ:

Մեզ հաւատացնում են, որ վրացի պրօլետարը չի կարողանում մոռացութեան տալ իր ազգայնական աւանդութիւնները և նոյնպէս մտաւորապէս յառաջադիմում է, իսկ հայ պրօլետարիատը շատ դանդաղ է առաջ գնում և դժուար ըմբռնում ժամանակի ոգին: Հարկաւոր է հասկանալ պատմական մօմենտները, պէտք է աչքի առաջ ունենայ, այսպէս ասած, տեղը, ժամանակը և տարածութիւնը: Չմոռանանք, որ բոլորս եղբայրներ ենք:

Այս փոքր շեղումից չետոյ պէտք է ասենք, որ Միջազգային Ընկերութիւնը բանուորներին տուեց մեծ ոյժ, որը իսկօյն և եթ արտայայտուեց գործադուլների ժամանակ:

Բանուորական գործադուլները, ինչպէս որ մեզանում, Ռուսաստանումն են լինում, եղել են առաջներում և ուրիշ երկրներում, բայց որովհետև միշտ բանուորները իրանց վրայ են չոյս դրել և գործել միմիայն իրենց ոյժով, այս պատճառով էլ մեծ մասամբ չաղթուել են և սովածութիւնից զրդուած նորից վերադարձել արհեստանոցներ առանց մի որեւիցէ դրական (եթէ ոչ բացասական) հետևանքի:

Եւրոպայում, համարեա՛ թէ ոչ մի տեղ գործադուլների համար պատիժ չկայ:

Զօրքի կամ ոստիկանութեան միջամտութեան

համար պէտք է, որ որեւիցէ անկարգութիւն պատահած լինի, կամ բանուորները կռուելիս լինեն, կամ մի որեւիցէ բան գործարանում ջարդուած լինի և կամ թէ պատուհանները կոտորուած լինեն, իսկ ամեն մի մեծ գործաւուրում պատահած նմանօրինակ դէպքի համար գործարանատէրերը ոչ թէ միմիայն կուրախանային, այլ նոյն իսկ կաշխատէին, որ այդպիսի դէպքեր շուտ շուտ պատահէին:

Ամենաթեթեւ անկարգութիւն պատահելիս գալիս են զօրքերը, բանտարկուած են բանուորներին պաշտպան հանդիսացողներին, այսինքն բոլոր համեմատաբար խելօք ու համարձակ բանուորներին և զնդակահարում են հակառակորդներին, իսկ մնացած լաւ ընկերներից զրկուած բանուորները լուռ ու մունջ սկսում են նորից աշխատել:

Վերջապէս գործարանատէրերը ունեն էլի մի միջոց կռուելու գործադուլի դէմ: Դա հեռակայն է՝ շատ անգամ նրանք խռովարար բանուորների տեղ բերում են նոր բանուորներ, որոնց հրաւիրում են կամ հարեան քաղաքներից, կամ թէ ուրիշ պետութիւններից:

Միջազգային Ընկերութիւնը գիտէր, որ գործադուլների միջոցով չի կարելի մեծ բարեփոխութիւններ մտցնել բանուորների դրութեան մէջ, բայց գիտէր և այն, որ առանց նրանց էլ չի կարելի մնալ, որովհետեւ յաճախ նրանց ազդեցութեան տակ գործարանատէրերը չետ են կանգնում իրենց սովորութիւններից — դժբախտ բանուորի առանց այն էլ չնչին օրավարձը պակասացնելուց: Այս պատ-



նառով ընկերութիւնը վնաս է օգնել, քան զգործ գնել ամեն շանք գործադուլները շարժող տանելու համար, երբ մի տեղ նա արդէն սկսուել է:

Իւրաքանչիւր մեծ գործադուլի ժամանակ Միջազգային Ընկերութեան ընտրեալ մարդիք հաղորդում էին այդ մասին, իրենց, ուրիշ քաղաքների և երկրների անդամներին և ամենուրեք, բոլոր արհեստանոցներում և գործարաններում, սկսում էին նուիրատուութիւններ յօգուտ բանթողներին: )))

Բանուորները տալիս էին, ով ինչքան կարող էր, որը մի կոպէկ, որը տաս կոպէկ և այլն: Բայց որովհետեւ նուիրատուների թիւը տասնեակ հազարներից էր բաղկացած, ուստի հաւաքւում էր մեծ գումար, որի շնորհիւ անհնարին էր դառնում սովով չաղթել բանուորներին:

Անկարգութիւնները վերջանում էին: Բանուորները յոյս դնելով յառաջադիմութեան վրայ, աշխատում էին ոչ մի առիթ չտալ զօրքին իրենց գործին միջամտելու: Անհնարին էր դառնում նաև բանուորների փոխարինումը, որովհետեւ Միջազգային Ընկերութիւնը իսկոյն յայտնում էր ամեն տեղ, որ ոչ ոք չգնայ աշխատելու այն գործարանատիրոջ մօտ, որի գործարանում գործադուլ է յայտարարուած:

Մի խօսքով, սկսած այն ժամանակից, երբ գործին միջամտեց Միջազգային Ընկերութիւնը, գործարանատէրերը յաճախ ստիպուած եղան զիջել բանուորների պահանջներին:

Այս բանը ահարկեալ, կասաղեցնում էր գործարանատէրերին և բոլոր բուրժուաներին և ահա այդ պատճառով ամեն տեղ գոռում-գոչում բարձրացաւ, որ անհրաժեշտ է հալածել այդ ընկերութեանը... Նախածանքը շարունակուում է և այսօր, բայց ամէն բան կախուած է միութիւնից, որովհետև ոյժը միութեան մէջն է:

Այդ շարժումը համարեա թէ միշտ յաղթուում է, բայց աշխատաւոր ժողովրդի վերջնական յաղթանակը դեռ ևս ապագայի գործն է:

1871 թւին Փարիզում գոյութիւն ունէր բանուորական կառավարութիւն (1871 թ. կոմմունա), որը երկու ամիս շարունակ կառավարում էր այդ ահագին քաղաքը և գործը առաջ էր տանում ուրիշ շատ կառավարութիւններից աւելի լաւ և ազնուաբար:

Պէտք է աւելացնել, որ կայ մի ուսում, որը քարոզում է, թէ բանուորները կարող են և պիտի ազատուեն իրենց ծանր վիճակից, որ լաւագոյն ապագայ ձեռք բերելը կախուած է նրանցից: Բայց ճշմարիտն ասած, չմոռանանք, որ մեզ հարկաւոր է ոչ թէ հիպնոտիզմուած ամբոխ, այլ զիտակից զօրք...

Մի՞թէ կարելի է պրօլետարիատը դնել մի ինչ որ անհասանելի պատուանդանի վրայ: Չպէտք է հաւատացնել նրան, որ նա եղել է և կլինի մարդկային անձնաւորութեան ազատման համար միակ մարտընչողը. չպէտք է խաբուած լինենք և խաբենք ու

րիշներին, որ ինչպէս մի մարդ, նա է միակ մտածողը, զգողը և գործողը:

Ո՛չ, միայն պրօլետարիատը չէ, որ կուուում է մարդկային ազատութեան և լուսաւոր ապագայի համար: Ընկեր-բանուորները իրաւունք չունեն մոռանալու և երբէք, ի հարկէ, չեն մոռանայ նոցա, որոնք առաջինը դուրս եկան կռուելու և յայտնապէս նուիրուեցան ժողովրդական գործին:

Ներկայումս զիտակից բանուորներ շատ կան, բայց մենք չպէտք է մոռանանք և այն, թէ ինչպէս են առաջ եկել բանուորական զօրքի այդ կարգաները: Միմիայն վերջին տարիների ընթացքում հազարաւոր ինտելլիգենտ մարդիք ուղարկուած են կամ բանտ կամ աքսոր:

Մի ինտելլիգենտ մարդուն ներկայումս գալիս է հարիւր կամ զուցէ հազար զիտակից բանուոր, բայց չէ որ կար մի ժամանակ, երբ մի զիտակից բանուորի համար տասնեակ ինտելլիգենտներ էին դատապարտուում:

Բանուոր ժողովուրդը ներկայումս ազատութիւնը ձեռք է բերում իր արիւնով, բայց մի՞թէ մենք իրաւունք ունենք մոռանալու այն մարտիրոսներին, որոնք արիւն թափեցին նախ՝ քան բանուորների հասկանալը, թէ կռիւր անխուսափելի է:

Մի՞թէ կարող ենք մոռանալ այն հերոսներին, որոնք զնալով դէպի մահ, երկար ժամանակ ոչ մի կարեկցութիւն և համակրանք չէին տեսնում այն ժողովրդական մասսայի կողմից, որի համար նրանք ձեռնում էին:

Ներկայումս էլ միմիայն բանուորի արիւնք չէ, որ հոսում է: Բանուորների հետ զուգընթաց մեռնում են և ինտելիգենտ մարդիք և ոչ ոք վստահօրէն չի կարող պնդել, որ հազար ինտելլեգենտ աւելի քիչ զոհ է տալիս, քան հազար բանուոր:

Իզուր չէ, որ «սև հարիւրակը» (բառիս լայն իմաստով) խոր ատելութիւն է տածում դէպի ինտելլիգենցիան. իզուր չէ, որ նա հէնց ձգտում է ինտելլիգենցիային ոչնչացնելու, ինչքան էլ այդ բանը դժուար լինի:

Փեօդալական ամրոցներից և միջնադարեան մենաստաններից իր ժամանակին դուրս եկան առաջին զիտակից մարդիքը, որոնք սկսեցին կռիւ մղել ազնուականութեան և հոգեւորականութեան արտօնութիւնների դէմ:

Իր, բուրժուազիայի միջից, նրա, երեսանների համար շինած ուսումնարաններից դուրս են եկել և կզան կապիտալի անհաշտ թշնամիներ և սօցիալիզմի զիտակից պաշտպաններ:

Ո՛չ, միմիայն պրօլետարիատը չէ ազատութեան համար կռուողը և սօցիալիզմի գաղափարների իրազօրծողը միմիայն նա չի լինի:

Պէտք է ասած, որ սօցիալիզմի դրօշակի տակ դեռ ևս ամողջ բանուորական դասակարգը չէ կանգնած:

Դեռ ևս քիչ չեն այն բանուորները, որոնք չեն հասկացել ոչ թէ միմիայն հեռու գաղափարները, այլ նոյն իսկ իրենց ամենամօտիկ շահերը:

Նոյն իսկ խոշոր գործարանները և ֆաբրիկա-

ները ունեն իրենց սև հարիւրակները: Այդպիսի, քիչ զիտակից, էլէմենտների թիւը աւելի մեծ է մասը գործարաններում:

Բոլորիս յայտնի է, թէ երբեմն զիտակից բանուորները ինչքան դժուարութիւնների են հանդիպում, որ իրենց ընկերական շրջանում միութիւնը անխախտ պահեն:

Ոչ թէ միայն այս կամ այն դասակարգի ներկայութիւնը, այլ և զիտակից մտքի յառաջադիմութիւնը կարող է լինել որպէս զրաւական լեղափոխութեան յաղթութեան և սօցիալիզմի ապագայ յաղթանակի:

Հաւաքել մի դրօշակի տակ սօցիալիստական ինտելլիգենցիան, աշխատաւոր զիւղացիութիւնը և բանուորական մասսան, կազմել նրանից մի զօրք — ահա վեհ նպատակ, որը կստեղծէ մարդկութեան, հետեւապէս և մեզ համար, իսկական հաւասարութիւն, միութիւն և ազատութիւն:

Այդ համամարդկային գաղափարները ամենուրեք պիտի տարածուեն ժողովրդական մասսայի մէջ, որը մեզանում դեռ ևս շատ տգէտ է և խաւար: Նոքա մեր ազգի մէջ, ժամանակի ոգու համաձայն, դուցէ ստանան ուրիշ գոյն. այլ կերպ չի էլ կարող լինել, երբ նա իր գոյութիւնը պաշտպանելու համար ստիպուած է կռիւ մղելու չորս, հինգ և աւելի շատ ազգութիւնների հետ: Իրօք, հարկաւոր է արիութիւն և զիտակից վերաբերմունք դէպի իրականութիւնը. հայ-թաթարական ընդհարում-

ները մեզ շատ բան սովորացրին. մենք պէտք է կազմակերպուենք, միանանք, վերածնունդ արմատապէս: Ժամանակ է...

Բ.

Այո, պէտք է կազմակերպուել, պէտք է վերածնունդ: Հասարակութիւնը պէտք է կազմակերպուած լինի այնպէս, որ մի քանիսի բարօրութիւնը ուրիշներին սնանկութեան ու դժբաղդութեան վրայ հիմնուած չլինի, որ ամեն մի անձնաւորութիւն իր բազմը որոնէ հասարակութեան բարեբաղդութեան մէջ, իսկ հասարակութեան բարեբաղդութիւնը բացառապէս կախուած լինի անձնաւորութեան բազմից:

Նոր հասարակական կազմը ստեղծում է մարդկային բնութեան բոլորովին նոր դժբ. ընդհանուր աշխատանք—ընդհանուր նպատակի համար:

Անհատական և ամբողջ հասարակութեան շահերի հանրութիւնը խիստ կզարգացնէ եղբայրութեան և հանրականութեան զգացմունքը:

Շնորհիւ յայտնի տնտեսական անհրաժեշտութեան, որը կապիտալիստական հասարակութեան մէջ մարդկային բնութեան ամենանշանաւոր դիժը դարձրել է եսականութիւնը, իսկ յեղափոխական բանուորական շարժման մէջ—կարգապահութիւնը և համերաշխութիւնը, սօցիալիստական արտադրութեան միջոցը ամենքից շատ կզարգացնէ հանրականութեան զգացմունքը...

Մարզս նախ և առաջ կզգայ իրեն ոչ թէ որ-

պէս մի անհատ, այլ որպէս հասարակութեան անդամ: Հասարակական ամբողջութեան բարօրութիւնը կպայժանաւորէ մարդկանց բոլոր զգացմունքներն ու մտքերը և դա կլինի ոչ թէ որպէս պատւեր, այլ որպէս բարոյական հարկադրութիւն:

Մեր կեանքի նոր կազմը պիտի շոշափի բոլոր հասարակական և բարոյական չարիքները: Յոյս ունենք, որ նա վերջ կտայ ոչ թէ միայն մարդկանց փոխադարձ շահագործութեանը, բոլոր բռնութիւններին, կրօնական, ընտանեկան և քաղաքական ճնշումներին, այլ և ամեն մի եսականութեան արտայայտմանը և այն բոլոր արհաւիրքներին, որոնցից խուսափել հնարաւոր է:

Սօցիալական հարցը\*) միաժամանակ քաղաքական, տնտեսական և բարոյական հարց է, որովհետև նա մարդուն ամբողջապէս ընդգրկում է իր մէջ, զբաղում է զանազան շարաբերական խնդիրներով, որոնք կապում են մարդուս իրեն նմանների հետ. նա ամփոփում է իր մէջ Ֆիզիքականի հետ հանդերձ, բարոյական և մտաւոր պահանջներ ու կարիքներ: Հետևաբար, խնդիրը կայանում է նրանում, որ մարդկային զրկանքների թիւը պակասեն, իսկ զուարճութիւնները աւելանան:

Հիմնել այնպիսի սօցիալական կարգ, որը միշտ մատչելի դարձնի իւրաքանչիւր անհատին ամեն մի տեսակ բարիք որպէս մի կարևոր պայժան մեր

\*) Պատրաստում է տպագրութեան համար իմ նոր գերբը «Սօցիալիզմ և բնական գիտութիւն»:

հասարակութեան, հետևաբար և մարդկութեան պրօգրէսիվ զարգացման—ահա մեր կեանքի գաղափարը:

Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է կազմել նպաստաւոր սօցիալական շրջան:

Սօցիալիզմը, ասում է Կոստի'ն, մի այնպիսի ուսում է, որը բաց է անում մեր առաջ ժամանակակից հասարակութիւնը, հանդերձ բոլոր անարդարութիւններով և չարիքներով որոնք նրա մէջ գոյութիւն ունեն և յայտնի են ամենքին, հասարակութիւնը պիտի բարեփոխուի արմատապէս և դառնայ մի նոր հասարակութիւն, ուր մարդիկ կարողանան ապրել ազատ և համահաւասար իրաւունքներով, աշխատեն բոլորը միասին և օգտուեն ընդհանուր աշխատանքի պտուղներից բոլորը միասին:

Որովհետեւ ամեն մարդ, անպայման, ունի ինքնապահապանութեան բնազդ (ինստիկտ) և ձգտումն դէպի բազդ, այս պատճառով սօցիալական հարցը նոր ժամանակուայ բան չէ, ինչպէս շատերը ենթադրում են, չնայելով որ մեր աչքերը նոր են բացւել: Աշխարհում ինչպէս ամէն բան, նոյնպէս էլ մարդս անցնում է ժամանակի մի շարք աստիճաններ, որոնք անընդհատ ենթարկում են նրան փոփոխութեան: Բայց նա ծնուել է հասարակութեան սկզբնական ծելի հետ և նրա հետ էլ կմեռնի:

Յիշեցէք հնադարեան ստրկութիւնը, որը մի քանի տեղերում այժմս էլ գոյութիւն ունի. տէրը իրաւունք ունէր ծախել նրան, պատժել, ծեծել և

նոյն իսկ սպանել ստրկին, որը միշտ տիրոջ համար էր աշխատում. տէրը տանջում էր նրան, առանց որևիցէ հաշիւ ներկայացնելու մէկին իր վարմունքների մասին: Յիշեցէք և այն, որ այդ կեանքի և մահու վերաբերեալ իր անսահման իրաւունքը և հետզհետէ սահմանափակում է, կորցնում է իր ոյժը. ստրկի գոյութեան պայմանները փոխում են, տեղ են աալիս ճորտութեանը, ճորտը մըշակում է տիրոջ հողը և մատուցանում է նրան որոշ ծառայութիւններ: Ճորտի վրայ այլ ևս չեն նայում, որպէս տիրոջ սեփականութեան վրայ: Յիշեցէք, վերջապէս և այն, ինչպէս ճորտը դարձաւ ազատ բանուոր: Եւ ահա այս բոլորից յետոյ դժուար չէ երեւակայել հասարակութեան դրութեան մէջ մի մօմենտ, երբ, փոխանակ հարուստ հողատէրերի և ճորտերի, փոխանակ բանուորների ու քնքոյշ անգործ պարոնների, կլինի այնպիսի մի կազմ, ուր մարդիկ փոխադարձաբար ծառայութիւն կ'մատուցանեն և կօգնեն միմեանց ընդհանուր աշխատանքով:

Իսկ եթէ բանուորը, ինչպէս այժմ ասացինք, ազատ է, ի՞նչ է նա էլի ցանկանում, ի՞նչ բանի է ձգտում:— Բանուորի ազատութիւնը միայն երեւակայական և խաբուսիկ բան է. բանուորը պիտի ունենայ հաց, կերակուր, շոր, որևէ բնակարան, պիտի հնարաւորութիւն ունենայ իր երեխաներին կրթութիւն տալու և ահա առաջ է գալիս մի հարց. ի՞նչ հնարքով է նա կարողանում բաւարարութիւն տալ այդ անհրաժեշտ կարիքներին.

ի հարկ է միայն աշխատանքով... նա կարելուցն չափ աշխատում է: Գուցէ դուք ենթադրում էք, որ բանուորը, աշխատելով իր բնակարանում կամ գործարանում, գործ դնելով իր բոլոր շնորհքը, արտադրած առարկաները կծախէ իրեն նպաստաւոր պայմաններով-- ձեռնտու գնով: Կամ գուցէ դուք կկարծէք որ նա իր շնորհքը, իր աշխատանքի արտադրութիւնը վաճառում է իր տիրոջը, որը ստիպում է նրան պատրաստել այն, ինչ որ պաշտօնին պէտք է և հաճելի է:

Այժմ դատենք այսպէս:

Ի՞նչպէս կարելի է բանուորին ազատ համարել, երբ գոյութեան պայմանները, որոնց մէջ գտնւում է բանուորը, ստիպում են նրան ծախել իր աշխատանքը: Զէ՞ որ ամեն բան գտնւում է փողատէրերի ձեռքում, հողը, աշխատանքի գործիքները, բոլոր մեքենաները, փողը և հոյակապ տները, իսկ ի դէպս, եթէ որեւիցէ բան սպառնում է նրա բարօրութեան, այն ժամանակ օգնութեան է գալիս քաղաքապահների մի ամբողջ ուժակ և զօրքերի մի ամբողջ զունդ:

Տէրերը ասում են բանուորներին. մենք ձեզ կ'վճարենք այսքան օրավարձ, իսկ եթէ դուք չէք ցանկանում, կարող էք չ'աշխատել. զնացէք: Բանուորները ստիպուած ընդունում են առաջարկուած պայմանները և բանում են այն օրավարձով. իսկ եթէ չեն համաձայնում, պիտի թուլանան քաղցից: Պարզ է, որ բանուորին ազատ չէ կարելի

համարել. եթէ նա ուզում է մի կերպ ապրել, պիտի աշխատի ամբողջ օր. չէ՞ որ ուտելը անհրաժեշտ է:

Այսպէս, ուրեմն քաղցից խուսափելու նպատակով բանուորը ստիպուած է վաճառել իր աշխատանքը և այդպիսով յօժարակամ հրաժարուել ազատութիւնից:

Այն ճիշտ է, մէկը կարիք է զգում միւսի մէջ, բայց նա ազատօրէն կարող է ապրել որոշ ժամանակ առանց բանուորի աշխատանքի, իսկ բանուորը ստիպուած է աշխատել ամբողջ օր, որ կարողանայ հայթայթել ապրուստի որեւիցէ միջոց . . .

Եթէ բանուորներից որեւէ մէկը մերժի իրեն առաջարկուած պայմանները, մի ուրիշը, աւելի դժբաղդ նրանից և աւելի կարիքից նեղուած պէտք է համաձայնուի. թող իր ընկերը թէկուզ քաղցից մեռնի: Բաւ է մի չնչին առիթ, որ ոստիկանութիւնը միջամտի և կարգը վերահաստատի:

Նետեապէս մենք գալիս ենք այս եզրակացութեան. ով զուրկ է սեպհականութիւնից, զուրկ է և ազատութիւնից: Սակայն այդ զեռ չի նշանակում, թէ պէտք է անպատճառ հարուստ լինել. բաւական է, որ մարդս իր տրամադրութեան տակ ունենայ այն շարժարութիւնները, որոնք անհրաժեշտ են ապրուստի համար:

Ազատ և կուշտ լինելու համար բանուորը պէտք է տիրի աշխատանքի և արդիւնաբերութեան բոլոր գործիքներին. հողը, գութանը, տափանը, ելը, ցանելու և էր անելու մեքենաները—այս բոլորին պէտք

է իշխի շինականը, գիւղական բանուորը՝ հանքերը— հանքահաններին, մեքենան—բանուորին, նաւերը նաւաստիներին և այլն և այլն:

Մինչև որ աշխատանքի և արտադրութեան գործիքները չեն պատկանի նոցա, որոնց ստանձաւ է գործադրելու իրաւունքը, մինչև որ աշխատանքի արդիւնքը և վերջապէս այն բոլորը, ինչ որ պատրաստուում է արտադրութեան գործիքներով, հաւասարապէս չի բաժանուի արտադրողների և բանուորների մէջ, վերջինս մինչ այդ չի լինի ազատ:

Եւ քանի որ իրերի գրութիւնը կմնայ անփոփոխ այնպէս, ինչպէս ներկայումս է, բանուորը չի դադարի վատնել իր ոյժերը ոչ միայն ի նպաստ իւր և ընտանիքի, այլ և բոլոր նոցա, որոնք նրան ստիպում են աշխատել:

Եթէ բանուորը հնարաւորութիւն ունենար այսպէս վարուելու (իսկ սա հնարաւոր է), դիցուք մի բանուոր, որը աշխատում է օրական տասներկու ժամ (իսկ ինչքան բանուորներ աշխատում են աւելի ևս երկար) իր գոյութեան միջոց գտնելու (նա պիտի կերակրի և ընտանիքին), նա պիտի աշխատէր այս նպատակով իր բանուորական օրուայ կէսը:

Բանուորի արդիւնքի երկրորդ կէսը պատկանում է տիրոջը. այլ կերպ չի կարող լինել, որովհետև ոչ մի պարոն առանց իրեն ձեռնտու պայմաններով չի վարձի բանուորին: Հիմա կարելի է հաշուել թէ ինչ մեծ օգուտ են ստանում նրանք

բանուորական օրուայ այդ կիսուց, ինչքան փող է մտնում նրանց զրպանը: Ընդհակառակ, եթէ բանուորը տիրապետի աշխատանքի համար բոլոր անհրաժեշտ գործիքներին, նա այն ժամանակ այլևս չի խնդրի ու ազաչի փողատէրերին, որ նրան թույլատրեն գործելու, ոչ մէկի հետ չի կիսի իր արդիւնքը, իսկ օրուայ այդ արդիւնքը պատկանելով միայն բանուորին, լիակատար բաւարարութիւն կտայ իւր և ընտանիքի պահանջներին:

Նոյն իսկ եթէ բանուորը աշխատէր սովորականից աւելի երկար, նրա աշխատանքի արդիւնքը կպատկանէր իրեն, այլ ոչ թէ նրան, որը ոչինչ չի շինում:

Ահա այսպիսով բանուոր ժողովուրդը կազատւեր կարիքի ճիրաններից, նա հնարաւորութիւն կունենար ուսում ստանալ, պարապել ինքնազարգացութեամբ, զբաղուել օգտակար գործերով, մի խօսքով զգալ, որ նա մարդ է: Ի հարկէ, ժամանակի ընթացքում այս բոլորը կիրադործուի և այսպիսի կարգն ու աշխատանքի կազմակերպութիւնը ընդհանուր մարդկութեան համար կդառնայ ամենամեծ բարիքը:

Եւ ինչպիսի մեծ օգուտ կբերէ մարդկութեան համար ընդունակ մարդկանց այդ ընդհանուր աշխատանքը:

Աշխատանքի հողը, կամ ինչպէս անուանում են, արտադրութեան բոլոր գործիքները, անպատճառ հանրական պիտի լինեն...

Կար ժամանակ, երբ արտադրութեան ամեն մի տեսակ գործիք, լինելով պարզ, ո՛չ բարդ և արժան, կարելի էր շատ հեշտ կերպով ձեռք բերել. ամեն մի գիւղացի ունէր իր տաւարը և այն բոլորը, որ գիւղատնտեսութեան համար անհրաժեշտ է: Այս բոլորը կարելի էր հին ժամանակ...

Իսկ այժմ հարկաւոր են մեքենաներ, շոգեկառքեր, շոգեմեքենաներ, իսկ սրանց կաթսաների համար հարկաւոր է ածուխ:

Իսկ ի՞նչով գնել այդ կարևոր բաները, ածխային հանքերը, գործարանները, ֆաբրիկաները, ուր աշխատում են հազարաւոր բանուորներ...

Ահա թէ ինչու արտադրութեան բոլոր այդ գործիքները, բոլոր միջոցները երկար ժամանակ չեն կարող լինել անձնական — մասնաւոր սեպհականութիւն, չեն կարող պատկանել առանձին անհատների կամ առանձին մասնաւոր խմբակների ու ընկերութիւնների, այլ, ինչպէս արդարացի նկատում է սօցիալիստ Կոստան, (Ի՞նչ է սօցիալիզմը՝ — Կոստա), պիտի դառնան կօլլեկտիվ, սօցիալական և հասարակական սեփականութիւն:

Պարզ է, որ զանազան ազգութիւններ, զանազան տեղերում, միատեսակ չեն կարող օգտուել հասարակական սեպհականութիւնից, որովհետեւ օգտուելու միջոցները զանազան են:

Մասնաւոր, անձնական աշխատանքը և նրա հետ միասին արտադրութեան գործիքների մասնաւոր, անձնական տիրապետումը մի որոշ ժամանակով իր դոյութիւնը կպահպանի այնպիսի տե-

ղերում, ուր այդ գործիքները շատ արժան են, կամ թէ այն հողագործական երկրներում, ուր հողային սեպհականութիւնը, հողային օրավարները, որոնք պատկանում են մասնաւոր անհատների բաժանած են մաս-մաս և որտեղ գիւղացին կամ ամեն մի հողատէր մշակում է իր հողը այնպէս, ինչպէս որ մշակում էր մեր նախահայր Ադամը:

Բնութեան բարիքները արդիւնաւէտ կերպով շահաւէտելու համար անհրաժեշտ է, որ բանուորները միշտ փոխադարձաբար օգնեն միմեանց և իրենց գործունէութեան մէջ լինեն միշտ մտերիմ և համերաշխ:

Մի քանի բանուորներ իրենց ձեռքն են առնում բնութեան այս կամ այն բարիքը, այս կամ այն բնական հարստութիւնը, միւսները մշակում են այդ բարիքները, վերջապէս մի քանիսը ձգտում են ընդհանուր աշխատանքի արդիւնքները եղբայրաբար և հաւասարաչափ կերպով դասաւորել աշխատող բանուորների մէջ:

Վերաբերեալ այդ արդիւնքների դասաւորման, պէտք է ասել, որ նրանց մի մասը տրւում է հասարակ բանուորներին, մի ուրիշ մասը տրւում է որպէս վճար որոշ պահանջների բաւարարութեան համար. օրինակ՝ ճանապարհների հաղորդակցութեան՝ փոստի, հեռագրի, ուսումնարանների, զրագարանների լուսաւորութեան, մի խօսքով, արդիւնքների այս երկրորդ մասը նշանակւում է լուսաւորութեան և յռաշաղիմութեան համար:

Հասարակութեան մէջ տարածուած է այն սխալ միտքը, որ սօցիալիզմը դէմ է ընտանիքի ներկայ ձևի յարատև գոյութեան, մասնաւոր բնակարաններին և այն ամեն բանին, որ մենք սովորենք մերը համարել:

Այդպիսի մի միտք համարձակուում էմ անլանել չիմար միտք, որովհետև երբ բանուորները, այսինքն բոլոր աշխատող մարդիկ կունենան ապրելու հնարաւորութիւն այնպէս, ինչպէս վաչել է մարդուս, այն ժամանակ միաբան ու քաշառող ընտանիքի կարգաւորութեան հարցը կպարզւի ինքնաբերաբար:

Ներկայ պարագաներում ընտանիքի \*) մասին շատ քչերն են մտածում:

Այն բոլոր մանուկները, որոնք շնորհիւ ներկայ տիրապետող պայմաններին մնացել են անխնամ և առանց կրթութեան, չնայելով որ նրանց հայրերն ու մայրերը հալումաշ են լինում առօրեայ ծանր աշխատանքներից, կամ նոքա, որոնց ծնողներն են փողոց նետել, այս բոլոր մանուկները սօցիալական իրաւակարգի շնորհիւ կուսանեն և կկրթուեն հասարակութեան ծախսերով, նրա հիմնած ուսումնարաններում:

Այստեղ մանուկները կսովորեն ոչ թէ միայն հասարակ գրագիտութիւն, այլ և զանազան արհեստներ և ահա այս ձևով նրանք կգառնան ապագայ օգտաւէտ բանուորներ:

\*) Պատրաստում է տպագրութեան համար. «Ընտանիք և կին»

Այս ուսումնարաններում նրանք կհազնեն, կկերակրուեն, կկրթուեն այնպէս, ինչպէս որ ներկայումս սնուում են ուսումնարաններում հարուստ մարդկանց որդիքը: Եւ ահա այդ հասարակական ուսումնարաններից, որոնք մատչելի կլինեն բոլորի համար, դուրս կզան ազնիւ և բարեսիրտ բանուորներ:

Հասարակութեան սօցիալիստական կազմակերպութեան նպատակը նրանումն է կայանում, որ անհատը կարողանայ զարգանալ բազմակողմանի. միմիայն այնպիսի շրջանում մենք կարող ենք հանդիպել լայն և ինտենսիվ (բեղուն) կեանք վարող անհատին ու զարգացած անհատականութեան, ուր մարդուս զանազան ձիրքերի և առողջ յատկութիւնների զարգացման համար կան անհրաժեշտ նպաստաւոր պայմաններ:

Բարգաւաճող անձնաւորութիւն պիտի համարել նրան, ով, ունենալով հոգևոր հարստութիւն, պաշար, ուրիշներին էլ մասնակից է դարձնում այդ հարստութեան և լայնացնում է իր գիտութեան պաշարը ուրիշներից իւրացրած մտքերով և զգացմունքներով:

Ինտենսիվ և առատ կեանքն իսկական մարդկային կեանքն է:

Հասարակական կազմակերպութեան նշանակութիւնը կայանում է նրանում, որ մարդկանց համերաշխութիւնը և փոխադարձ սէրը զարգանայ, որ անհատի բարոյական և հոգևոր ոյժերը լայնանան և որ նրա կեանքը լինի բեղուն ու ինքը բաղդաւոր:

Պայմանների ստեղծագործումը և նրանց շարունակ կատարելագործութիւնը, որոնք անհրաժեշտ են անհատի բազմակողմանի զարգացման համար, կազմում են բարոյականութեան յայտանշանը (կրիտերիում)։ սրան պիտի աւելացնել այն բոլորը, որ ունի բարոյական նշանակութիւն և ազդեցութիւն։

• • • • •  
 և զինուորները կդառնան ուրիշ հայեացքների տէր մարդիկ, չէ՞ որ նրանք մեր արիւնակիցներն են և նրանք բռնի անշատուած են իրենց ընտանիքներից։ Փոխանակ աշխատելու, ծառայելու իրենց սիրելի ընտանիքներին, նրանք ստիպւած են վատնել իրենց ոյժերը զօրանոցներում իբր թէ հայրենիքը պահպանելու նպատակով, իսկ հայրենիքը պաշտպանելու փոխարէն, զօրքերը պաշտպանում են փողատէրերին, որոնց վտանգ է սպառնում բանուորական գործադուլը, որի նպատակը բանուորի աշխատանքի վարձատրութեան աւելացնելն է։

Այսպէս է վարուել կառավարութիւնը միշտ և կշարունակի նոյն ուղղութեամբ, քանի որ բանուորները չեն կազմակերպուած և չունեն ընդհանուր բանուորական միութիւն իրենց իրաւունքները պաշտպանելու համար։

Իսկ երբ բանուորները կ'դառնան աւելի ուժեղ, կազմակերպելով ընդհանուր միութիւն, հասկանալով իրենց շահերը և ըմբռնելով իրենց ձեռնարկութեան իրաւունքը, այն ժամանակ կ'հիմ-

նւեն ուրիշ օրէնքներ, որոնք միանգամայն ապահով կղարծենն կեանքի մէջ նրան, ով աշխատում է։

Օրէնքը մեզ համար ապահով կղարծնի նաև մեր երեխաների կրթութիւնը և լուսաւորութիւնը։ Թոյլ, հիւանդ, ծեր և աշխատելու անընդունակ մարդիկ հնարաւորութիւն կունենան ծրի կերակուր և ապրուստի անհրաժեշտի պիտոյքներ ստանալու։

Եւ անհա այսպէս, շարունակ, քաջ առ քաջ դիտելով, մենք կգանք այն հետեւանքին, որ մեր փաշտպանած միտքը, մեր գաղափարը արդարացի և լաւագոյն կեանքի մասին կիրագործուի. նա կլինի ոչ թէ ցնորք, այլ իսկական կեանք։ Իւրաքանչիւր մարդ կսկսի աշխատել իր ոյժերի չափ և կըստանայ վարձատրութիւն համաձայն իր պահանջների։

Իսկ հողը . . . հողը կլինի ընդհանուր սեփականութիւն, կպատկանի բոլորին, և այն բոլոր մարդիկ, որոնք աշխատում են, կօգտուին նրա պտուղներին։

Իզուր կարծում են որ այն ժամանակ պարոններ և տէրեր այլևս չեն լինի. դա ճիշտ չէ, որովհետև այդպիսի մի կազմակերպուած հասարակութեան մէջ ամեն մէկը կ'զգայ իրեն աւելի լաւ, քան ներկայումս ամենահարուստ մարդը։

Մեզ համար այժմ պարզ է, որ անգործութիւնը, արատաւոր և անառակ կեանքը մաշում է մարդուս առողջութիւնը աւելի շատ և ուժգին, քան նոյն իսկ ոյժից վեր աշխատանքը։ Այդպիսի կեանքից առաջ են դալիս հիւանդութիւններ, յաճախ ապուշութիւն և մինչև անգամ մահ։

Աւելացրէք սրան և այն, որ մարդս ամեն մի  
 րոպէ վախենում է զրկուել իր հարստութիւնից,  
 վախենում է որ իրեն կարող են կողոպտել, խաբել-  
 նա նախանձում է նոցա, որոնք նրանից աւելի շատ  
 ունեն, աւելի հարուստ են, իսկ այդ նախանձը  
 մասնաւորապէս հարուստների մէջ անսահման է.  
 միլլիոնատէրերին նա մղում է դէպի կռիւ նոր միլ-  
 լիոններ ձեռք բերելու, նրանք աշխատում են ունե-  
 նալ միլլիարդներ և այսպիսով նրանց ցանկու-  
 թիւնը վերջ չունի:

Իսկ ինչքան դառն է հարստի համար զգալ ի-  
 րեն մշտական ատելութեան և արհամարանքի ա-  
 ուարկայ, համոզուել, որ նրան սիրում են առերես  
 և չարգում են միմիայն շահասիրութիւնից դրդուած  
 կամ նրա հարստութիւնից մի բան խլելու նպա-  
 տակով: Վերջապէս քանի քանի հարուստներ, մի-  
 անգամայն սնանկանալով, կորցնում են իրենց հարս-  
 տութիւնը:

Այո՛, նոր կազմակերպուած կեանքի մէջ բոլոր  
 մարդկանց բարօրութիւնը ապահովուած կլինի և  
 իրերի այսպիսի դրութեան շնորհիւ ոչ ոքի կեանքը  
 անվերջ հոգսերով թունաւորուած չի լինի՝ ոչ ազ-  
 քատի ու հարստի, ոչ առողջի ու հիւանդի և ոչ  
 երիտասարդի ու ծերունու:

Բոլոր ազգերը կսիրեն միմեանց, որպէս եզ-  
 րայրներ, որպէս մի մարդկային ընտանիքի անդամ-  
 ներ: Հարստի և աղքատի մէջ կռիւ այլևս գոյու-  
 թիւն չի ունենայ, չի լինի կարիք նաև զինուորա-

կան ուժով պահպանել արտօնութիւնները, որովհե-  
 տև նոքա այլևս գոյութիւն չեն ունենայ:

Մարդիկ հետզհետէ լուսաւորում են, սօցիա-  
 լիզմը անշուշտ կթաղաւորէ և ինչքան շուտ բոլոր  
 աշխատող մասսաները կկազմեն մի ընդհանուր  
 ընկերութիւն, այնքան շուտ կսկսի իշխել սօցիալիզ-  
 մի թագաւորութիւնը:

Պէտք է այդ հսկայ բանուորական զօրագնդի  
 անդամ լինել: Եղի՛ր անդամ . . .

Գ.

Ժամանակակից սօցիալ-էկոնօմիկական և քա-  
 ղաքական յարաբերութիւնների սկզբունքը հետև-  
 եալն է. «Բոլոր մարդիկ մէկի համար և իւրաքան-  
 չիւրը բոլոր մարդկանց համար»:

Սօցիալիզմը, «աշխարհիս յոյսը», միակ խելա-  
 ցի և լիովին իրագործելի միջոցն է, որով կարելի  
 է վերջ տալ մրցումներին, տառապանքներին, մարդ-  
 կանց փոխադարձ կեղեքումների կռուին, նա է  
 միակ միջոց եղբայրութեան, դիտութեան, անհատի  
 լայն և բեղուն կեանքի և վերջապէս իւրաքանչիւր  
 անհատականութեան լայն և բազմակողմանի զար-  
 գացման:

Ահա սօցիալիզմի մի քանի հիմնական սկզբ-  
 բունքներ (իրաւալին և տնտեսական). 1) իւրա-  
 քանչիւր մարդ իրաւունք ունի զարգանալ և լիովին  
 բաւարարութիւն տալ իր բոլոր առողջ յատկութիւն

ունեցող նիւթական և հոգևոր պահանջներին: 2) Արտադրութեան գործիքները կամ միջոցները պիտի լինեն բոլոր աշխատող հասարակութեան սեփականացուածութիւն: 3) Հասարակական արտադրութեան և դասաւորման կազմակերպութիւնը պիտի լինի հաւասարապէս: 4) Ընդհանուր աշխատանք՝ յօգուտ ընդհանուրի: 5) Ընտրուելու իրաւունք ունենան նոքա, որոնք կատարում են որևիցէ հասարակական պարտականութիւն:

Բուրժուական կազմի կործանումն ու սօցիալիզմի իրագործումը կարող է լինել և պիտի լինի աշխատող մասսայի գործը: Սրա համար անհրաժեշտ է, որ նա ունենայ սօցիալիստական աշխարհահայեացք և կազմակերպուած լինի կեղեքուած ու գործող ժողովրդից:

Սօցիալ-քաղաքական դիտակցութեան և աշխատողների կազմակերպութեան արագ աճման համար անհրաժեշտ է ոչ թէ միայն «անձեռնմխելիութեան և ազատութեան» ապահովացումը, այլ և որոշ տնտեսական պայմաններ:

**ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՐՃ ԲԱՆՈՒՈՐՈՎԱՆ ՕՐ**

1) Բանուորական օրուայ երկարութիւնը վատ է ազդում աշխատողների առողջութեան և կեանքի յարաաւելութեան վրայ. դրանից առաջ է գալիս խիստ յօգնածութիւն, չղերի և մկանների քայքայումն, սրտի գործունէութեան թուլութիւն, ցնորամտութիւն և այլն:

Քնի թերութիւնը ուժասպառ է դարձնում բանուորին: Թոյնը — սնդիկը, որի հետ ամեն օր նա գործ ունի, կարող է միշտ թունաւորել նրան: Մեծ վտանգ է սպառնում բանուորին նաև ածխածինով նոսրացած օդը, որի ազդեցութիւնը վերին աստիճանի յարատե է: Խիստ վտանգաւոր է և այն փոշին, որը գոյանում է մետաղներից և հանքերից, իսկ մարմնի միակերպ դրութիւնը յանախ առաջ է բերում պրոֆեսսիօնալ հիւանդութիւններ:

Այկօզիլիզմը, որին բանուորը սխալմամբ դիմում է իր ծանր դրութիւնը մոռացութեան տալու և նեարդերը հանդստացնելու նպատակով բանուորական երկար օրը և վերջապէս բնակարանները, որ բանուորները վարձում են գործարանին մօտիկ, քաղաքի վատառողջ մասում և բաւականին թանգ գնով — այս բոլորը մատնում են նրանց մահաբեր կորստի:

Անզդիայի մեքենայագործական արտադրութեան մէջ բանուորական օրուայ կրճատումը և 9 ժամեայ աշխատանքի սահմանումը զգալի կերպով նրպատեց բանուորների կեանքի յարաաւելութեան, միջին թւով 10<sup>0</sup>/<sub>0</sub>: Նոյն պատճառի շնորհիւ բարակացաւ Անզդիայում (1844—1888 թ.) պակասեց 50<sup>0</sup>/<sub>0</sub> — ուլ:

Գիշերուայ աշխատանքը աւելի ևս վնասակար է. բանուորը հնարաւորութիւն չունի թարմացնել իր ոյժերը, իսկ օրուայ քունը այնքան երկարատե է, որ բանուորի առողջութիւնը և կազմուածքը

քայքայուի, որ նրա կեանքը չկարճանայ: Նոյն իսկ եթէ լինին ամենալաւ առողջապահական պայմաններ, բանուորական օրը ութ ժամից աւել չպիտի տևի:

2) Բանուորական օրուայ երկարութիւնը շատ վատ է ազդում և աշխատանքի արգասաւորութեան վրայ: յոգնածութիւնը առաջ է բերում ուշադրութեան թուլութիւն և ցնորամտութիւն, իսկ սրանից—առաջ է գալիս նախ նիւթի փչացում, որը պահանջում է որոշ ժամանակ իր վերանորոգման համար և յետոյ արդիւնքների յատկութեան ու քանակութեան նուազում:

Բանուորական օրուայ կրճատումը և արդիւնքների քանակութեան բարձրացնելը համարեա թէ երբէք առաջ չի բերում աշխատանքի արգասաւորութեան պակասում:

Մենք ասում ենք համարեա, որովհետեւ բանուորական ժամանակի կրճատումը և աշխատութեան լարուածութիւնը միշտ լիովին չեն պահպանում հաւասարակշռութիւն, այլ միայն այնպիսի դէպքերում, երբ արտադրութիւնը պահանջում է ուշադրութեան լուրջ լարումն:

Բանուորական օրուայ երկարութիւնից առաջ է գալիս և այն, որ բանուորը հիւանդանալով, ստիպուած է ընդհատել իր աշխատանքը օրերով, այն ինչ օրուայ կրճատումը օգտակար կարող է հանդիսանալ լուսաւորութեան, վառելիքի և ուրիշ ծախսերի խնայողութեան տեսակետից:

3) Բանուորական օրուայ երկարութիւնը առաջ է բերում և շատ ուրիշ դժբաղգութիւններ. օրինակ, բանուորը յանկարծակի դառնում է հաշմ, ստանում է վէրք և յանախ մահ: Ուժասպառութիւնից ծագում է ցնորամտութիւն, իսկ վերջինիս շնորհիւ սաստիկ անզգուշութիւն և վտանգ—այլանդակելու:

Դժբաղգութիւնները ամենից շատ պատահում են կէսօրուայ աշխատանքի վերջին ժամին, ճաշից առաջ և յետոյ, մանաւանդ շաբաթ օրերը ճաշից յետոյ և աւելորդ աշխատանքի ժամերին:

4) Երկար բանուորական ժամերը վատ են ազդում նաև բանուորի վաստակի քանակութեան վրայ: Կարճ բանուորական օրը, աշխատանքի բարձր գինը, երկար, բաւարար քունը և օրուայ մէջ մի քանի ազատ ժամերը կազմում են այն անհրաժեշտ պայմանները, որոնց շնորհիւ բանուորը հնարաւորութիւն կունենայ հաւաքել թարմ ոյժեր, զարգացնել իր հոգեւոր ոյժերն ու պահանջները և հետաքրքրուել հասարակական կեանքով: Բանուորական կազմակերպութեան գործը աւելի հեշտ կերպով առաջ կ'ընայ, իսկ կեանքի լաւագոյն պայմանների համար մղած կռիւր, լինելով յաջող, կսահմանի բանուորի համար նրա օրուայ չարչարանքի համապատասխան վաստակ:

5) Երկար բանուորական օրը առաջ է բերում, անգործների մեծ քանակութիւն: Կարճ բանուորական օրուայ սահմանումը պակասանցում է անգործ բանուորների թիւը, այն ինչ երկար օրուայ

շնորհիւ (եթէ երկու դէպքերումն էլ աշխատանքի մնացեալ պայմանները միևնոյնն են) պարապ բանուորների թիւը շատանում է:

6) Վերջապէս երկար բանուորական օրը չափազանց վատ է ազդում բանուորների մտաւոր, բարոյական և քաղաքական զարգացման վրայ:

Երկար բանուորական օրը աղբիւր է այնպիսի ցաւերի, ինչպէս ուղեղի յոգնածութիւնը, մտքերի ու զգացմունքների թուլութիւնը, կենսական գործունէութեան բարձրացնելու ցանկութիւնը արւեստական կերպով (արբեցողութիւն) և փոքր հետաքրքրութիւն դէպի շրջապատող հասարակական կեանքը:

Կարճ բանուորական օրը, ընդհակառակ, հնարաւոր է դարձնում ազատ ժամեր, ուղեղի թարմութիւն, պարզ սիրտք, նուրբ զգայմունք, հետաքրքրութիւն դէպի զրքեր ժողովարանների յանձնումն ու մասնակցումն և հնարելու ծիրք: Վերջապէս նրա շնորհիւ՝ բանուորի հետաքրքրութիւնը դէպի ներքին և արտաքին քաղաքականութեան հարցերը լայնանում է, նա զիտակցում է իր իրաւունքը, նա ունի ժամանակ և հնարաւորութիւն քննադատել տիրապետող կազմը:

Այստեղ պարզ է այն սպառնալիքը, որը ուղղուած է քաղաքական և տնտեսական իշխանութիւն ունեցող կեղեքիչների դէմ: Այստեղ նկատելի է ընդհանուր գործադուլի հնարաւորութիւնը, որի նպատակը կլինի արտադրութեան բոլոր ճիւղերը զրկել սեպհականատէրերից (էկսպրոպրիա-

ցիալով), պարզ է նաև սօցիալիզմի զաղափարների տարածումը, անտարբեր մարդկանց սթափումն ու զիտակիցների համախմբումը...

Դ.

Սովորաբար դէմ լինելով բանուորական օրուայ կրճատման, կապիտալիստները ասում են, որ դա վնաս է բանուորի համար, որովհետև կրճատումը կպակասեցնի նրա վաստակը և արտադրութիւնը:

Դա ճիշտ է, որովհետև երբ արտադրում են առանձին առարկաներ, շնորհիւ ուշադրութեան կենդրոնացման և աշխատանքի լարման, արդիւնքների քանակութիւնը յաճախ շատանում է (հակառակը պատահում է քիչ): Իսկ շնորհիւ իրենց միահամուռ պահանջների, կազմակերպուած բանուորները միշտ անփոփոխ կպահեն օրական աշխատանքի վաստակը: Կեղեքիչները ասում են, որ կարճ բանուորական օրը առաջ կբերէ արտադրութեան նուազումն, իսկ արբեցողութիւնը կսաստկանայ:

Բանուորական օրուայ կրճատման ընդդիմադրութեան զլխաւոր պատճառները սոքա են.

- 1) բանուորի ազատ ժամանակը, որը հասարակութեան սօցիալիստական կազմակերպութեան համար նախնական ամենաանհրաժեշտ պայմանն է:
- 2) Ցանկանալով ստանալ կարելույն չափ մեծ յուսելածոյ վաստակ, կապիտալիստը աշխատում է, որ մեքենան ոչ մի բոլորէ անգործ չմնայ և շատ անգամ այդ նպատակով ստիպում է բանուորներին մաքրել մեքենան, երբ վերջինս գործում է:

Հարիւր տարի սրանից առաջ, երբ դործի մէջ մեքենաներ երևացին, որոնք մի կողմից առիթ տուին կանանց և երեխաների աշխատանքի կեղեքման, իսկ միւս կողմից փոխարինեցին հազարաւոր բանուորների, դժուար չէր սահմանել միջին թուով 16 ժամեայ բանուորական օր, իսկ մի քանի դէպքերում նոյն իսկ 20:

Ինչո՞ւմն է կայանում կանանց և երեխաների աշխատանքի շահաւէտութիւնը ձեռնարկող կապիտալիստի համար: Ահա թէ ինչու. նախ՝ նրանց աշխատանքը գնահատուած է էժան, երկրորդ՝ մանուկները և երեխաները դժուար են կազմակերպուած. նրանց հեշտ կերպով կարելի է ստիպել աշխատելու — ինչքան որ տիրոջը հաճելի է (մինչև գործարանային օրէնքների հրատարակելը): Վերջապէս անգործների թիւը շատանում է, իսկ չափահաս տղամարդկանց օրավարձը պակասում:

Թէ ինչպիսի մեծ վնաս է տալիս կանանց և երեխաներին գործարանային աշխատանքը, իր ժամանակակից պայմանների շնորհիւ, դա ինքն ըստ ինքեան շատ պարզ է: Քայքայելով կնոջ առողջութիւնը, աշխատանքը վատ է ազդում ծնուող սերնդի վերայ: Երկար ժամանակ կտրուելով ընտանիքից, կինը չի պարապում երեխաների կրթութեամբ, գռեհկանում է, լաճախ բարոյականապէս դառնում է հաշմ, երեխաների աճումն ընդհատուած է, կազմուածքը թուլանում է և կեանքը կրճատուած:

Սլլասերուծն առաջ է գնում հսկայական քայ-

լերով. նա աւելի ևս արագ է ընթանում այնտեղ, ուր երեխաների աշխատանքը աւելի է տարածուած:

Կնոջ մասնակցութիւնը կազմակերպուած արտադրութեան մէջ ունի այն դրական նշանակութիւնը, որ նա ձեռք է բերում տնտեսական անկախութիւն, հեշտ է հասկանում բոլոր աշխատողների ընդհանուր շահերը, նրա դասակարգային ինքնաճանաչութիւնը զարգանում է և նա տղամարդու հետ համահաւասար հիմունքների վրայ մասնակցում է ընդհանուր կռուին լաւադոյն ապագայ ձեռք բերելու համար:

Ե.

Բանուորական օրուայ կրճատման վերաբերեալ իննում են զիջումներ և՛ կառավարութեան և՛ կապիտալիստների կողմից:

Ուժասպառ եղած և տեղ-տեղ այլասերուած ժողովուրդը չի կարող տալ լաւ զինուորներ և նաւաստիներ. երկու կարգի աշխատաւորները, ինչպէս նաև բանուորները, հոգում են բուրժուազիայի պիտոյքները:

Առաջ բերենք էլի մի քանի օրինակ. 1) Խոշոր կապիտալը, բարւոքելով աշխատանքի պայմանները, հեշտ կերպով վնասում է մանր արտադրութեանը. 2) տեխնիկայի զարգացումը պահանջում է առողջ և աւելի շուտ ըմբռնող բանուոր և ահա այս պատճառով, պէտք է նկատել, որ բանուոր-

ներրծագուծ են ձեռք բերել ինքնազարգացում և ինքնակրթութիւն:

Այս պատճառներից ամենամեծ ազդեցութիւն ունեցողը բանուորների կազմակերպուած կռիւն է, որը ստիպում է կապիտալիստներին զիջումներ անել: Բայց այս կազմակերպութեան դէմ, որը մինչև այժմս բաղկացած է պրօլետարիատի փոքրամասնութիւնից, փողատէրերը կազմում են զանազան ընկերութիւններ՝ սինդիկատներ, տրիէստներ և այլն:

Գործադուլի ժամանակ կամ վարձուծ են ոչ կազմակերպուած բանուորներ և կամ գործը պատուէր է տրուում արտասահմանում և ուրիշ քաղաքներում: Իսկ աչքի ընկնող խելօք բանուորները գործարանից վճարուծ են դուրս:

Այսպէս թէ այնպէս, գործարանային օրէնստուութիւնը հիմնուել է, պլխաւորապէս, շնորհիւ կազմակերպուած բանուորների գործ դրած նշման, բայց քանի որ չկայ անկախ վերահաստութիւն, (ինսպեկցիա) օրէնքները կդառնան մեռած տառ:

Ռուսաստանը ունի բաւականին մեծ գործարանական-օրէնսդրական անցեալ: Բանուորական շարժումը օրէնքների սահմանման գլխաւոր պատճառն է, իսկ օրէնքների ուղիղ գործադրման համար, ի հարկէ, անհրաժեշտ է որոշ կօնտրօլ, որովհետև այս դէպքում մեծ դեր են խաղում չայտնի ոստիկանական կշռագատութիւններ:

Ժողովրդական այս շարժումները ներկայումս քաջ յայտնի են բոլորին. 1905 թւականը մի երևելի տարի էր, երբ առաջ եկան անտեսական և քա-

ղաքական վիթխարի գործադուլները, երբ կապիտալիստ գործարանատէրերը պակասացրին բանուորական օրավարձը շատ գործարաններում, երբ տեղի ունեցան շատ բռնութիւններ և ճնշումներ, կառավարութեան օղնութեամբ չես խլուցին արած զիջումները և հակառակ օրէնքի կատարուեցին անթիւ ձերբակալութիւններ և անվերջ արքտրներ:

Մանօթանալով Եւրոպայի և Ռուսաստանի գործարանական օրէնստուութեան համառօտ պատմութեան հետ, մարդս զալիս է այս եղբակացութեան.

- 1) Բանուորական մասսայի զրութեան բարւոքումը հնարաւոր է միմիայն այն ժամանակ, երբ բանուորները կուեննան կազմակերպուած կռիւ:
- 2) գործարանական օրէնքները ոյժ կուեննան միմիայն այնտեղ, ուր քաղաքական պայմանները բանուորական կազմակերպութիւնների զարգացման համար նպաստաւոր են և ուր կառավարութիւնը զանուծ է ժողովրդական ներկայացուցիչների վերահսկողութեան տակ և հպատակուծ է հասարակական կարծիքին:

2.

Այժմ ասենք մի քանի խօսք բանուորական օրավարձի մասին, որովհետև բաւարար ու գոհացուցիչ օրավարձը կարճ բանուորական օրից չետոյ՝ սոցիալիզմի չաղթանակի համար նախնական, անհրաժեշտ պայմանն է կազմուծ:

Ծայրահեղ աղքատութիւնը հանդերձ վատ սննդի, վատառողջ բնակարանի և գոյութեան անապահովութեան, չափազանց վատ է ներգործում մարդուս հոգևոր ոյժերի և ֆիզիքական կազմուածքի վրայ:

Ճիզիքական թուլութիւնը, մտաւոր ու բարոյական վիատութիւնը լաւագոյն ապագայի համար չեն կարող տալ գիտակից մարտիկներ:

Բանուորական օրավարձի չափը կախուած է տէրերի և բանուորների շարաբերական ոյժերից:

Բանուորական կազմակերպութիւնների աղատութիւնը, գործադուլները, գործարանական օրէնստուութիւնը, որը իրօք սահմանափակում է տէրերի կամայականութիւնը, բանուորների քաղաքական ոյժերի զարգացումը — ահա օրավարձի բարձրացնելու զլխաւոր պատճառները:

Մի քանի երկրներում սրանց հետ միանում են և առանձին տնտեսական պայմաններ. օրինակ՝ Ամերիկայում, ուր բանուորական աշխատանքը աւելի է գնահատուում քան ուրիշ պետութիւններում, օրավարձը բարձր է Անգլիայից 35<sup>0</sup>/<sub>0</sub> - ով, իսկ Ռուսաստանից 250<sup>0</sup>/<sub>0</sub> - ով:

Բացի նպաստաւոր քաղաքական պայմանները, այնտեղ կայ շատ ազատ հող. զնել ցանկացողները, նոյն իսկ ոչ հարուստները, կարող են շատ հեշտ կերպով հող ձեռք բերել:

Ահա այսպէս բանուորների համար անմատչելի է դառնում գիւղատնտեսութիւնը և նրանք աշխատում են միմիայն քաղաքներում: Իսկ mini

imum սահմանելու համար պէտք է լինեն՝ աշխատանքի վարձատրութիւն, նպաստաւոր քաղաքական իրաւունքներ և օրէնսդրական պաշտպանութիւն:

Նստ անգղիական քաղաքային ձեռնարկութիւններում այդ minimum-ը (առնւազը) սահմանւած է համաձայն բանուորական կազմակերպութիւնների պահանջի:

Գերմանական սօցիալ-դեմօկրատիան պահանջում է, որ օրավարձի minimum-ը իրագործուի պետութեան բոլոր քաղաքային ձեռնարկութիւններում: Նոյնը պահանջում է աշխատանքի մի քանի երկրներում և յայտնի զիտնական Կառուցկիին:

Աւստրալիայում և Նոր-Չելանդիայում արդէն մի քանի տարի է, որ գոյութիւն ունի «օրավարձի բիւրօ» կամ «միջնորդ դատարան» որը ընտրուած է ժողովրդից: Իւրաքանչիւր մարդ ազատ կարող է դիմել երկուսից մէկին: Բիւրօի անդամների կէսը բաղկացած է բանուորներից, իսկ միւս կէսը — տէրերից, որոնք առաջինների հետ միասին ընտրում են նախագահ՝ մասնաւոր մարդկանցից:

Սօցիալիզմի չաղթանակի համար երրորդ նախնական պայմանը նա է, որ աշխատանքը առողջապահական տեսակէտից ապահովուած լինի, ձեռք առնուած լինեն այն բոլոր միջոցները, որոնք վերջ են տալիս անբախտութիւններին. տէրերը խիստ պատասխանատու լինեն այդ պահանջների խանգարման համար:

Այդ պահանջները ամփոփում են իրենց մէջ բանուորի կեանքի և առողջութեան օրէնսդրական

պահպանութիւնը—մաքրութեան, լուսաւորութեան, վառելիքի և օգնամաքրութեան կանոնները, գործարանի մեծութիւնը, ապահովացումն հրդէհից, մեքենաների պատսպարումը և վերջապէս պետական ապահովացումը կեանքի:

Շատ հետաքրքիր է հետեւեալ երևոյթը. Եւրոպայի մի քանի երկրներում 50 տարի սրանից առաջ տիրոջ պատասխանատուութեան համար անհրաժեշտ էր համարուում, որ բանուորը ապացուցանէր նրա շանցանքը: Աւելի ուշ, շնորհիւ բանուորական կազմակերպութիւնների գործ զբաժ ճնշման, տեսնում ենք հակառակը. տէրը ստիպուած է իր արդարութեան համար ապացոյցներ բերել:

է.

Ներկայումս աշխատող մասսան պիտի ձգտի կարելոյն չափ լայն կերպով կազմակերպելու արհեստակցական միութիւններ, որոնք աչքի առաջ ունեն տնտեսական և քաղաքական նպատակներ:

Ահա արհեստակցական միութիւնների նպատակը: 1) Ընդգրկմադրել աշխատանքի պայմանների վատացմանը, 2) կռիւ մղել բանուորական օրուայ կրճատման և օրավարձի աւելացման համար, չափաւարարելով գործադուլ կամ նուազեցնելով աշխատողների թիւը և փոխադարձաբար օգնելով իրար բոլոր բարոյական և նիւթական պահանջներում, 3) կարելոյն չափ աշխատել աւելացնելու անդամների թիւը, 4) մշակել կռուի միջոցներ, 5)

բարձրացնել բանուորների սօցիալ-քաղաքական ինքնաճանաչութիւնը, այսինքն՝ կազմել ժողովներ, դասախօսութիւններ, դրադարաններ և այլն:

Արհեստակցական կազմակերպութիւնները կազմում են կռուի վարժարան. նրանք անհրաժեշտ նախնական պայմանն են նոր աշխարհ, նոր կազմ հաստատելու համար: Բայց այդ պայմանը դեռ բաւական չէ սօցիալիզմի հարցը լուծելու համար: Արհեստակցական միութիւնները միմիայն անհրաժեշտ պայմաններ են մասսայի զիտակցութեանը և միութեանը զարկ տալու համար, նրանք մի միջոց կամ մի ուղի են՝ կռուի համար. ուսումնարան են՝ ուր կրթւում են ապագայ սօցիալիստական հասարակութեան անդամները:

Պէտք է աչքի առաջ ունենալ՝ որ ներկայ կապիտալիստական դարում գոյութիւն ունեն արհեստակցական կազմակերպութիւններին հակադիր միութիւններ: Անհրաժեշտ է կռիւ մղել նրանց դէմ, անհրաժեշտ է հաշտուել բուրժուական հակումների և ախոյեանութեան (օպորտունիզմ) աճման հետ...

Այժմ հարց տանք մեզ. ո՞ւր է մեզանում այն հրաշագործ կուսակցութիւնը, որը մօտակայ ապագայում պիտի ձգտի իրագործել սօցիալիզմի զաղափարները:

Այդ կուսակցութիւնը պիտի կռուի բանուորական օրէնստուութեան սահմանման համար, իսկ օրէնստուութիւնը կպաշտպանի աշխատանքը և նրա բոլոր ճիւղերի գործադրումը. կուսակցութիւնը պիտի ապահով դարձնի աշխատանքը ինչպէս

արդիւնաբերական գործարաններում, նոյնպէս և ար-  
ւեստագիտական, տնայնագործական, զիւղատնտե-  
սական, տնային, առևտրական և ուրիշ զբաղմունք-  
ներում:

Օրէնսդրական պաշտպանութիւնը մօտաւո-  
րապէս պէտք է կայանայ հետեւեալում, ինչպէս  
արդէն այդ մշակել է ռուս պրօգրէսիվ և լաւագոյն  
կուսակցութիւններից մէկը:

1) Բանուորական օրը ոչ մի տեղ ութ ժամից  
երկար չպէտք է լինի: Գիւղատնտեսութեան մէջ  
և այն դէպքերում, երբ անհրաժեշտ է աշխատել  
ամբողջ օր, պէտք է ամեն ութ ժամից յետոյ փո-  
խել բանուորներին: Առողջապահական տեսակէտից  
վտանգաւոր արտադրութիւններում աշխատանքը  
6 ժամից երկար չպիտի տևի: Կանայք և երեխա-  
ները (16—18 տար.) պիտի աշխատեն վեց ժամ:

2) Գիշերային աշխատանքները բացի բացառիկ  
դէպքերից—արգիւրում են:

3) Անգրագէտ մարդոց աշխատանքի չնդունել.  
պէտք է ունենալ զոնէ տարրական ուսում:

4) Վճարելով կանանց օրավարձ, նրանց ազա-  
տել աշխատանքից, ծնելու ժամանակ ութ շաբա-  
թով՝ 4 շաբաթ ծնելուց առաջ և 4-ը ծնելուց  
յետոյ:

5) Սահմանել օրավաճերի minimum առանձին  
բիւրօի միջոցով, որը կազմուած լինի բանուորնե-  
րի և միութիւնների ներկայացուցիչներից:

6) Աշխատանքի առողջապահական պայման-  
ները և բանուորների կեանքի ամեն մի տեսակ ա-

պահովացում պիտի լինի պետութեան և տէրերի  
հաշուով: Պէտք է հիմնել երկու կոնտրօլ. մէկը վե-  
րահասու լինի աշխատանքի մշտական կարճատեւու-  
թեան, միւսը—ընտրուած բանուորներից՝ օրէնք-  
ների ճիշտ գործադրմանը:

7) Արհեստակցական միութիւնները պիտի ու-  
նենան խրախուսումն և լայն ազատութիւն. նրանք  
պիտի մասնակցեն զանազան ձեռնարկութիւննե-  
րում աշխատանքի կազմակերպելու գործի մէջ:

Աւելացնում եմ բոլոր վերևում արածին, որ  
ձախակողմեան կուսակցութիւնների յաղթութիւ-  
նը կուենեայ մեծ նշանակութիւն: Այդ յաղթու-  
թիւնը կստիպի կառավարութեանը ոչ թէ միայն  
լայնացնել զիշումների շրջանակը, այլ և տալ ա-  
մեն մի անհատին իրաւունքներ, որոնք միանգա-  
ձայն հնարաւոր դարձնեն նրա ազատ զարգացումը:

Ը.

Անկասկած դեռ չի եկել այն ժամանակը, որ  
բանուորական պահանջներին օրէնսդրական ձև տալ.  
բայց կոխը դեռ ապագայի գործն է:

Ինչքան շատ յաղթութիւններ ժողովուրդը  
տարած կլինի ժամանակակից գոյութիւն ունեցող  
կազմի վրայ, այնքան նա մօտիկ կլինի սօցիալիզմին:

Այդ կուում արած յաջողութիւնները ինքն  
ըստ ինքեան շատ թանգ են մեզ համար: Զեռք բե-  
րելով կապիտալիզմից զանազան զիշումներ յօգուտ  
բանուորների, մենք նրանց կեանքը դարձնում ենք

աւելի կենսունակ և հնարաւորութիւն տալիս աւելի լայն կերպով զարգանալու:

Կռուելով բանուոր դասակարգի ամենամօտիկ շահերի համար, թէկուզ այնպիսի շահերի, որոնք չեն խանգարում ներկայ տիրապետող իրաւակարգը, արդէն դրանով մենք յառաջադիմում ենք:

Այդ կռուով մենք միշտ աչքի առաջ ունենք ոչ թէ միայն ապագայ սօցիալիզմի, այլ և կենդանի անհատի շահերը:

Ահա այս պատճառով մենք չենք կարող անտարբեր գտնուել դէպի վիւղական մասսայի թըշուառացումն ու կործանումը, չնայելով որ դա նպատում է „համախմբուած պրօլետարների շատանալուն“:

Յեղափոխութեան նպատակը կայանում է նախ նրանում, (ի սկ մենք ապրում ենք չեղափոխական պարում), որ պէտք է հիմնել սահմանադրութիւն և ապա մացնել օրէնսդրական կարգ, որի շնորհիւ կարելի կլինի մանրամասնօրէն կանոնադրել բոլոր յարաբերութիւնները:

Մենք այս բոպէիս խօսում ենք այն հիմնական իրաւունքների մասին, որոնք տրւած պիտի լինեն իւրաքանչիւր բանուորին առանձնապէս և բոլոր բանուոր դասակարգին ընդհանրապէս:

Բանուորական օրուայ maximum և օրավարձի minimum—ահա այն իրաւունքները, որ պիտի ունենայ իւրաքանչիւր անհատ, որը ստիպուած է վաճառել իր բանուորական ոյժը:

Բանուորների ամենազխաւոր պահանջներից

մէկը նա է, որ սահմանուի որոշ կանոնաւոր բանուորական կեանք:

Ինչքան մեծ օգուտ տալ մեզ դործարանը, այնուամենայնիւ չպէտք է դրաւուել նրանով, երբ նա անկարող է ապահովացնել բանուորի կեանքը և դժբախտութիւնների առաջն առնել:

Չնայելով որ բանուորական պահանջների թիւը մեծ է, բայց և այնպէս կարելի է սահմանափակել հետեւեալ հիմնական պահանջներով. բանուորական օրուայ maximum-ով, (ամենաշատը) որը պիտի պահպանէ բանուորի ոյժերը և օրավարձի minimum-ով, որը բաւարարութիւն կտայ նրա պահանջներին:

Եթէ կեանքի այս պահանջները դրուած կլինեն ամուր հիմքերի վրայ, բտնուորները իրենց բոլոր շահերի պաշտպանութեան համար կունենան կռուի յենակէտ:

Պէտք է նկատել, որ որոշ կենսական չափը մշտական չէ. նա կարող է և պէտք է փոփոխուի հանդերձ արտադրութեան զարգացման:

Նա պիտի պահպանի բանուորական դասակարգը ոչ թէ միայն այլասերումից, այլ և ապահովացնի նրա զարգացումը:

Ինքը կեանքը, գիտութիւնը և առողջապահութիւնը բանուորական օրուայ երկարութեան որոշում են ութ ժամ. սրա մասին մանրամասնօրէն կխօսենք ներքևում և կժանօթացնենք ընթերցողներին, թէ ինչ կարծիքի են՝ յայտնի բժիշկներ այդ հարցի վերաբերեալ:

Պարզ է, որ սրա իրականացումը միայն այն

ժամանակ մենք կարող ենք պահանջել, երբ մեր տնտեսական կեանքի մէջ ունենք ամուր լենակէտ:

Անցեալ տարի լեղափոխական միջոցների շնորհիւ գործարաններում բանուորները մտցրին ութ ժամեայ բանուորական օր, բայց բացի անգործութիւնից ինչպէս վերևում ասել ենք, դրանից ոչինչ դուրս չեկաւ:

Մենք ասացինք, որ տնտեսական կեանքում անհրաժեշտ է ունենալ լենակէտ: Այդպիսի լենակէտ (մեզ համար դա աւելի ևս մեծ նշանակութիւն ունի) հողն է: Դրա վերաբերեալ Ռուսաստանի լաւագոյն և յայտնի գործիչներից մէկը— Պեչեխով\* ասում է. «Բանուոր դասակարգի կռիւր միայն այն ժամանակ յաջողութիւն կգտնի, երբ հողը ազգայնացրած է» (նայի՜՜սուիդացիա):

Միայն այն ժամանակ մենք վճռականապէս կարող ենք յայտնել կապիտալիստներին մեր պահանջները, երբ բանուորը հնարաւորութիւն կունենայ սարքուելու իր սեփական արտադրութիւնների մէջ:

Միայն այն ժամանակ մենք կտրական կերպով կարող ենք ասել գործարանատէրերին, սուր բաւարարութիւն մեր պահանջներին, հակառակ դէպքում պէտք չէ մեզ քո գործարանը:

Պետերբուրգի բանուորները, նախ քան իրենց ապահովացնելը, նոյնպէս վճռեցին բացարձակ կեր-

\* Հաց, լոյս ու ազատութիւն. Պեչեխով. (տես «Յառաջ»-ի գրադարանը № 2):

պով ներկայացնել իրենց պահանջները. հետևանքը եղաւ այն, որ գործարանները կողպեցին և շատ բանուորներ սովամահ եղան:

Անկասկած, ընդհանուր բանուորական դրամարկղները նմանօրինակ դէպքերում կարող են մեծ դեր խաղալ, բայց ո՛ւր են այդպիսի դրամարկղներ, որ կարողանան փոքր ի շատէ բարուօրել անգործ մարդկանց դրութիւնը:

Այդպիսի պահանջներ չեն կարող ոչնչացնել բանուորական մասսայի լեղափոխական ոգին. նոյն իսկ մեղանում մերթ այստեղ, մերթ այնտեղ երեւում են կայծեր:

Ինչքան շատ յաղթութիւններ տարած կլինի բանուորական մասսան իր շահերի պաշտպանութեան համար այնքան մօտիկ կլինի նա սօցիալիզմին, այնքան սօցիալիզմի լոյսը ուժգին կգրաւի նրան և այնքան վառ կմնայ նրա մէջ գաղափարի ոգևորութիւնը:

Թ.

Բոլոր այն մարդիկ, որոնք համարում են իրենց սօցիալիստ և ընդունում են այդ ուսումը, կանգնած են նոր հասարակական կազմի կողմը. դոցա թուումն են շատ բարեկիրթ մարդիկ և բոլոր զիտակից բանուորները, որոնք լաւ են հասկացել, թէ ինչպիսի դրութեան մէջ են իրենք գտնուում: Բացի այդ՝ նոյն կողմը կլինի անկասկած և բոլոր բանուորական մասսան՝ հէնց որ նա կադատուի տգիտութիւնից և յայտնի նախապաշարմունքներից: Նոր հասարակական կազմի կողմնակիցները

այդպիսով կ'կազմեն սօցիալիստական կուսակցութիւն: Իսկ որովհետեւ այդ կուսակցութիւնը պաշտպանելու է բանուորների շահերը, այդ պատճառով էլ նա կ'կոչուի բանուորական կուսակցութիւն:

Այստեղ, շեշտում ենք կրկին անգամ, ծագում է լուրջ հարց:

Բանուորական շարժումը սկսուեց մեղանում, քաղաքներում: Յայտնի է, որ սօցիալիզմը աւելի հեշտ է տարածւում քաղաքային բանուորների մէջ, քան թէ գիւղական բանուորների և աւելի հեշտ գործարաններում քան թէ գիւղերում:

Բայց չէ որ գործարանների բանուորները կազմում են ընդհանուր ռուսական բանուորների մի չնչին մասը. իսկ մեծամասնութիւնը ապրում է գիւղերում և պարապում երկրագործական աշխատանքով:

Թէ ինչպէս պիտի վերաբերուել ղէպի այդ աշխատող գիւղացի բնակչութիւնը, դրա վերաբերեալ կարծիքները զանազան են:

Մի վարդապետութիւն մօտաւորապէս քարոզում է հետեւեալը. թէկուզ գիւղացին լինի սակաւահող և աղքատ, թէկուզ նա ամբողջ կեանքի ընթացքում ապրի իր սեպհական աշխատանքով, նա այնուամենայնիւ չի պատկանում բանուորական դասակարգին: Որովհետեւ նա ունի մի կտոր հող, այս պատճառով նա պատկանում է սեպհականատէրերի և կապիտալիստների դասակարգին, կամ ինչպէս անուանում են, բուրժուական դասակարգին. ահա թէ ինչու այդ վարդապետութիւնը սակաւահող գիւղացիութեանը անուանում է մանր բուրժուա-

դիա: Մի ուրիշ վարդապետութեան կողմնակիցներ աշխատաւոր գիւղացիութեան վրայ նայում են ուրիշ հայացակէտից, որը աւելի մօտ է ճշմարտութեան, ըստ մեր խորին համոզմունքի, մանաւանդ մեզ համար:

Նրանց կարծիքով ամեն մի մարդ, որ ապրում է իր սեպհական աշխատանքով, պատկանում է բանուոր դասակարգին. լինի նա գործարանում կամ պարապի երկրագործութեամբ դա միւլենոյն է:

Բացի այդ սակաւահող և քայքայուած գիւղացիք գտնւում են միւլենոյն դրութեան մէջ, ինչ որ գործարանային բանուորները. ինչպէս առաջինները նոյնպէս էլ վերջինները ստիպուած են աշխատել ոչ թէ յօգուտ իրենց, այլ յօգուտ հարուստների և կապիտալիստների:

Քաղաքային բանուորը աշխատում է գործարանատիրոջ համար, իսկ քայքայուած գիւղացին—այս հողատէր—երկրագործի համար, որից նա հողը վերցրել է կապալով, կամ թէ այն անգութ վաշխառուի համար, որը գիւղացուն ծանրաբեռնել է անվճարելի պարտքերով:

Քայքայուած գիւղացին աշխատում է սկուպչիկի—առևտրականի համար, որը նիւթերը առնում է նրանից երեք անգամ արժան, իսկ ծախում երեք անգամ թանգ. վերջապէս նա, այդ խեղճ գիւղացին աշխատում է չինովնիկների (աստիճանաւորների) համար, որոնք ոտքից մինչև գլուխ նրան թաղել են հարկերի և տուրքերի մէջ:

Ինչպէս որ քաղաքային բանուորը զուրկ է արտադրութեան գործիքներից, նոյնպէս էլ գիւ-

ղացին չի իմանում ինչով պարապի, որովհետև նա չունի բաւականին հող, որ կարողանայ արդիւնաւէտել:

Այս պատճառով նա մնում է կալուածատիրոջ կամ աշխարհակերի ձեռքում նոյն կապալի պայմանների տակ, ինչպէս և գործարանի բանուորը գործարանատիրոջ ձեռքում: Կասկած չկայ, պէտք է տւելացնել, քանի որ նրանք պարապում են իրենց մանր զիւղատնտեսութեամբ, նրանք երկար ժամանակ չեն ցանկանայ, որ իրենց հողը տրուի բոլոր զիւղացի բնակչութեանը մշակութեան:

Որ հողը մեզ համար մեծ նշանակութիւն ունի, սրա մասին խօսել են շատերը: Մեր զիւղացիների մի մասը տեղափոխւում է ուրիշ հեռաւոր տեղ, համարեա թէ բոլոր յարաբերութիւնները խլում է հայրենի ծննդավայրի հետ, իսկ միւս սակաւահող մասը, չնայելով իր աղքատութեան, յամառ կերպով շարունակում է կռիւ մղել հողի համար նոյն ձևով, ինչ ձևով նա մաքառում էր մինչև այժմ:

Իսկ քաղաքում զիւղացին ստիպուած է ամենաչնչին օրավարձով աշխատել կալուածատիրոջ համար, մի կտոր հաց վաստակելու պատճառով. ուրիշ հնար չկայ. ո՛ր գնայ: Քաղաքներումն էլ գործարանների թիւը չի կարող այնպէս արագ աճել, որ բոլոր զիւղից եկածներին աշխատանք տայ:

Մեր տառապող զիւղացիութիւնը վաղուց է,

որ աշխատում է հող ձեռք բերել. պէտք է անընդհատ շարունակել այդ սուրբ գործը:

Հողի հարցը ընդհանուր զիւղական հարց է. այստեղ բոլոր չարչարւող զիւղացիք պիտի խորհեն և գործեն միակերպ. նրանց աշխատանքի շահերը ընդհանուր են և կապուած մի հողով և մի երշմարտութեամբ:

Հողի անհաւասար և անարդար դասաւորութիւնը ընդհանուր պետական գործն է. ամբողջ պետական իշխանութիւնը համակրում և պահպանում է այդ կարգը նոյնպէս, ինչպէս և գործարանների բանուորների ճնշուած դրութիւնը:

Իրենց ազատութեան համար քաղաքային բանուորները և տառապող զիւղացիութիւնը պէտք է աշխատեն արմատապէս փոխել բոլոր դրութիւն ունեցող պետական կարգերը:

Մեր քաղաքային բանուորները շատ տեղերում արդէն սկսել են այդ գործը, նոյնը շուտ կը հասկանայ և աշխատող զիւղացիութիւնը: Սնտարակոյս զիւղացիք չեն կարող յարաբերութիւն չունենալ քաղաքային բանուորների հետ:

Ներկայումս ռուսական բոլոր աշխատող բնակչութիւնը ոտքի է կանգնել կռիւ մղելու իր ազատութեան համար: Գիւղացիութեան համար այստեղ առաջի տեղն է բռնում հողի հարցը, այսինքն հողի արդարացի դասաւորութիւնը, մասնաւոր հողերի սեպհականութեան ոչնչացումը և ընդհանուր ու համահաւասար սեպհականութեան սահմանումը:

Եւ անա երկրորդ վարդապետութեան կողմնա-

կիցները, զիմելով իրենց ծրագրով զիւղացիութեանը, հասկացնում են նրան, որ անհրաժեշտ է վերցնել խոշոր կալուածատէրերից հողերը, և բաժանել առհասարակ բոլոր հողերը համահաւասար կերպով բոլոր աշխատող բնակչութեան մէջ. ուրեմն հողից պիտի օգտուեն միմիայն նոքա, որոնք իրենց սեպհական աշխատանքով մշակում են հողը:

Այսպէս ուրեմն, աշխատող զիւղացիութիւնը պիտի գործի ձեռք-ձեռքի տուած...

Բայց ներկայումս մեզանում տեղ-տեղ սով է տիրում զիւղերում: Սրանցից շատերը քար ու քանդ են եղած, ասպարէզ է զալիս գաղթականութեան սոսկալի հարցը, կեանքի անապահովացում...

Թէև պետութեան մէջ քաղաքական յեղափոխութիւնից առաջ եկած փոփոխութիւնները մեծ նշանակութիւն ունեն, բայց և այնպէս նրանք չեն վերաբերում մի հարցի, որը աւելի ևս մեծ նշանակութիւն ունի. այդ հարցը հարստի և աղքատի կամ ունեւորի ու չքաւորի հարցն է:

Քաղաքական յեղափոխութիւնը զեռ ևս չի ազատում բանուոր մարդոց, որովհետեւ բացի քաղաքական ճնշումը և քաղաքական ստրկութիւնը գոյութիւն ունի տնտեսական ճնշում և տնտեսական ստրկութիւն:

Ահա հէնց սրանումն է կայանում այսպէս կոչուած սօցիալական հարցը:

Քաղաքական հարցը շոշափում է պետութիւն և հասարակութիւն. այստեղ հասարակութիւնը աշխատում է թօթափել իր վրայից ինքնակալ պետութեան լուծը:

Իսկ սօցիալական հարցը աչքի առաջ ունի միմիայն հասարակութիւնը: Այստեղ հարցը վերաբերում է այն բանին, թէ ինչպէս պէտք է սահմանել արդարացի յարաբերութիւններ հասարակութեան անդամների մէջ:

Նոր հասարակական կազմում ամեն բան համաձայն պահանջների, կ'բաժանուի հաւասարօրէն և կ'լինի լիութիւն:

Ձի լինի ոչ սով ոչ մահաբեր ցուրտ:

. . . . . Կգայ մի ժամանակ,

երբ այդ բոլորը չի լինի խիմերա և ուտոպիա, երազ:

Ժ.

Թող վերոյիշեալ բոլոր ասուածը լինի խիմերա, թող նա լինի ուտոպիա, թող վերջապէս լինի երեւակայութիւն, բայց և այնպէս նա կ'զարգացնէ շատերին և կ'զարձնէ գիտակից մարտիկներ կուլտուրական և տնտեսական կռուի համար:

Իրօք, որ վերոյիշեալ պահանջների իրագործումը ներկայ տնտեսական, կուլտուրական և քաղաքական պայմաններում անհնարին է թւում բոլորիս:

Անհրաժեշտ է, որ պրօլետարիատը պատրաստ լինի կատարելու այն դերը, որը նրան վիճակուած է նոր կարգ սահմանելիս:

Անհրաժեշտ է, որ մասսան աճի կուլտուրայէս, անհրաժեշտ է որ նրա կազմակերպութիւնը մեծ ծաւալ ստանայ:

Մեզ պէտք են ոչ թէ միայն քաղաքական և գաղափարական գործիչներ, այլ և գործիչներ արդիւնաբերութեան մէջ, որոնք ընդունակ լինեն կազմակերպելու ապագայ պետութիւն:

Մի յեղափոխութիւն, որ առաջ է բերում բոլոր հասարակական յարաբերութիւնների փոփոխութիւն, պիտի լինի մասսաների գործը. այն մասսաների, որոնք հասկանում են թէ ի՞նչ է կռուի նպատակը և ի՞նչ են ուղղում նրանք ձեռք բերել:

Անհրաժեշտ է երկար և տոկուն աշխատանք, որպէս զի մասսաները հասկանան իրենց նպատակները, իսկ այդ աշխատանքը, պէտք է ասած, որ թէև աննշան և դանդաղ է առաջ ընթանում, բայց և այնպէս ունի յառաջադիմութիւն:

Պէտք է տարածել այդ գաղափարները կարելոյն չափ լայն կերպով, սփռել լուսաորութեան սերմերը ժողովրդի բոլոր խաւերի մէջ, պաշտպանել բանուորական ընկերութիւնները, ինչ տեսակի էլ նրանք լինեն, կազմակերպել սպառողական և արտադրող ընկերութիւններ, որոնք մի կողմից կը դառնան ապագայ զօրքի զօրագնդեր, իսկ միւս կողմից — ուսումնարան՝ լաւ վարպետներ կրթելու համար:

Այդ բոլոր ձեռնարկութիւններին կմասնակցի նաև բուրժուազիայի այն մասը, որը ընդհանրապէս համակրում է սօցիալական բարենորոգումներին:

Լինելով հակառակ սօցիալիստների հիմնական գաղափարներին, բուրժուազիան, պարզ է, չի ըն-

դունի վերոյիշեալ ձեռնարկութիւնները որպէս նոր նպատակի հասնելու մի միջոց, այլ կմասնակցի նրանց շնորհիւ այն անմիջական համակրանքի, որը նա տածում է դէպի կուլտուրական գործը:

Ծանօթ լինելով մեր հասարակութեան յարակալութեան հետ, իմանալով, որ այդ հասարակութեան մէջ կազմակերպութիւններ համարեա թէ գոյութիւն չունեն, մենք պնդում ենք, որ մեծ յառաջադիմութիւն կունենան այն գաղափարները, որոնք իրաւային նօրմաների անընդհատ բարեփոխութեամբ ձգտում են դէպի սօցիալիզմի իրագործումը:

Անհրաժեշտ է ներքին գործունէութիւն:

Հասարակութիւնը, ներկայ մօմենտում չի կարող պատահաբար դուրս գալ այն դրութիւնից, որի մէջ նա գտնուում է, որովհետև դեռ ևս չկան այն ոյժերը, որոնց շնորհիւ նրա ազատութիւնը հնարաւոր լինի:

Որոշ չափով պէտք է սպասել հասարակական ոյժերի բնական և ներքին գործունէութեան, սպասել, որ հասարակական զիտակցութիւնը զարգանայ մինչ այն աստիճան, որ նա կարողանայ ստեղծել նոր բան:

Մինչև այժմ բոլոր ընդդիմադրական էլէմենտների հաղորդակցութիւնը ժողովրդի հետ կամ հարեանցի կերպով էր լինում կամ միակողմանի:

Փօքրիկ բանուորական ընկերութիւնները մեղանում, շատ տեղերում մեծ դեր են խաղում և ունեն մեծ նշանակութիւն. զիւղական ընկերու-

Թիւնը պէտք է ընթանայ նոյն շաւղով, եթէ ցանկանում է ունենալ լուրջ և չաւիտենական նշանակութիւն:

Բայց բոլոր այդ ընկերութիւններում մասնակցող մարդկանց թիւն աննշան է:

Բոլոր կուսակցութիւնների հերթական գործը պիտի լինի այն, որ նրանք սկսեն կազմակերպել ժողովրդական այն խաւերը, որոնք մինչև այժմ կազմակերպուած չէին կամ պատահաբար, կամ չարակալութեան շնորհիւ և կամ վերջապէս շնորհիւ այն հանգամանքի, որ գործող չեղափոխական տարրերը անկարող էին անհրաժեշտ բաւարարութիւն տալ ժողովրդի պահանջներին:

Ժողովրդի այդ ոչ կազմակերպուած մասը հազարներ են և նրանց մէջ թաղմուտ է այնպիսի մեծ ոյժ, որը կարող է տանել ազատութեան յաղթանակը և միևնոյն ժամանակ նոր կազմի ու կարգի յենակէտը դառնալ:

Այժմ անհրաժեշտ է ոչ թէ միայն կուսակցական կազմակերպութիւն, ոչ թէ որևիցէ փոքր բջիջներ, այլ ժողովրդական մասսայի հետ լայն հաղորդակցութիւն:

Եւ այդպիսի ղեպքերում չպէտք է աչքի առաջ ունենալ նեղ կուսակցական նպատակներ կամ ամենամօտիկ շահեր, այլ, ընդհակառակ, պէտք է առաջ տանել գործը, նոյն իսկ եթէ նրա պտուղները հեռու ապագային են պատկանում, գործել աստիճանաբար և զրաւել այդպիսով ժողովրդի խելքն ու միտքը:

Ժողովուրդը պէտք է մեղ հետ ծանօթանայ

սովորական կեանքում և դատի մեր մասին ոչ թէ միայն մեր ծրագիրը աչքի առաջ ունենալով, այլ և մեր գործնական աշխատանքը տեսնելով:

Ինքնավարութեան օրգանները կարող էին, ի հարկէ, հաղորդակցութեան անփոխարինելի միջոցներ դառնալ, եթէ նրանք լաւ հիմքերի վրայ զրուած լինէին:

Նրանցից ի բաց պէտք է օգտուել ամեն տեսակ հասարակական ընկերութիւններից — ինչպէս տնտեսական, նոյնպէս և կրթական, կռիւ մղել արբեցողութեան և անմիտ զուարճութիւնների դէմ թէ զիւղերում և թէ քաղաքներում:

Գրաւելով ղէպի հասարակական կազմակերպութիւնները կարելոյն չափ մեծ մասսա, մենք միայն այն ժամանակ կարող ենք տալ նրան պատշաճաւոր քաղաքական կրթութիւն:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում ժողովրդի մտաւոր զարգացումը անճանաչելի է դառել, իսկ վերջնական հետեւանքը, ի հարկէ, չի կարող լինել այսօր կամ վաղը. կսխալուէինք, եթէ ասէինք, որ մարդկային ամեն մի հիգ իսկոյն և եթ պիտի վարձատրուի:

Մեծ նշանակութիւն ունի նաև ոչ կուսակցական արհեստակցական կազմակերպութիւնների աջակցութիւնը:

Այդ աշխատանքը պահանջում է ոչ թէ միայն ժամանակ և ոյժի սովորական գործադրում, այլ և շատ ուրիշ բան. նա չի կարող սահմանափակուել լոկ վերահսկողութեամբ. նա պահանջում է, որ

մարդս լաւ ծանօթանայ ժողովրդի կեանքի հետ, յօգուտ նրան գործ դնի ոչ թէ միայն իր խելքն ու եռանդը, այլ և հոգին:

Այո, պէտք է մօտ լինել ժողովրդին:

Անկասկած ծայրագոյն ձախակողմեանների շարքերի մէջ կան մարդիկ, որոնք գործում են այնպիսի ինքնամոռացութեամբ, որ միանդամայն արժանի են ժողովրդի հաւատարմութեան և շնորհակալութեան:

Ներկայ մեր կեանքը նման է մի մեծ բարձրութեան, որը անցնելու համար անհրաժեշտ է թափել մեծ ճիգ, զույգէ և տալ մեծ զոհեր:

Անհատի ազատութիւնը և անկախութիւնը, նրա բազմակողմանի զարգացումը և անսահման կատարելագործութիւնը, ահա այն նպատակը, որը մենք պիտի աչքի առաջ ունենանք:

Եւ ահա ի համապատասխան այդ նպատակի պիտի դրուած լինեն մարդու բոլոր կարիքներն ու պահանջները, բոլոր ոյժերը և ընդունակութիւնները:

Պէտք է նախատեսել անհատի զոյութեան նաև տնտեսական, քաղաքական և կուլտուրական պայմանները: Պէտք է աշխատել, որ նրա շահերը կարելոյն չափ ամեն կողմից լրիւ կերպով ապահովուած լինեն:

Նպատակի էութիւնը հէնց նրանումն է կայանում, որ զտնել կամ ստեղծել այնպիսի հասարակական ձեւեր, որոնք իւրաքանչիւր անհատի կեանքը ապահովեն ամեն կողմից:

Բոլոր մարդիկ հաւասար ըիւրեւնը ունեն բազ-

դաւոր լինելու և ոչ մէկի բարօրութիւնը չպիտի խանդարի միւս անհատների կեանքը:

Պէտք է պաշտպանել ոչ թէ միայն իր ընտանիքի, համայնքի կամ ազգութեան շահերը, այլ և ձգտել՝ կարեկցաբար վերաբերուել դէպի մեր հարեաններն ու նրանց շահերը և առհասարակ դէպի ամբողջ մարդկութիւնը:

Այս բոլորը իրագործելու համար պէտք է իւրաքանչիւր անհատին պահանջ ներկայացնել, դա աշխատանքն է:

Այդ պահանջը պիտի ներկայացուի ինչպէս յանուն անհատի սեպհական բարօրութեան, նոյնպէս և յանուն ամբողջ հասարակութեան շահերի:

Միմիայն արգասաւոր աշխատանքի պոօցէսի մէջ, միմիայն շնորհիւ իր ոյժերի և ընդունակութիւնների գործադրման, անհատը կարող է զարգանալ և կատարելագործուել:

Եւ միմիայն ընդհանուր աշխատանքը կարող է ապահովել հասարակութեան իրաւունքները, միմիայն նա կապահովի ամբողջ ժողովրդի իրաւունքը որևիցէ առանձին դասակարգերի կամ անձնաւորութիւնների չար ձգտումներից և դիտաւորութիւններից:

Խոյս տալով աշխատանքից, անհատը ինքն իրեն զրկում է սեպհական բաղդից. նրա և հասարակութեան մէջ առաջ է գալիս անխուսափելի և անվճռելի ընդհարում:

Մեզ համար թանգ և մօտ պիտի լինեն բոլոր աշխատող մարդիկ և բոլոր աշխատող դասակար-

գերը հանդերձ իրենց շահերի, ինչպէս պրօլետարիատը և գործող գիւղացիութիւնը, նոյնպէս և աշխատաւոր ինտելլիգենտը:

Աշխատանքի շահերը լիովին ապահովացնելու և բոլոր աշխատողներից մի համերաշխ ամբողջութիւն կազմելու համար անհրաժեշտ է ընդունել սօցիալիզմը, որը նպատակալարմար է և արդարացի կերպով կչաղթանակէ հետեւեալը. ութ ժամ աշխատանքի համար, ութ ժամ քնի համար և ութ ժամ ազատ:

Այժմ համառօտ կերպով կասենք մի քանի խօսք այն մասին, թէ առանձին բժիշկ-հեղինակներ ինչ հայեացքի են բանուորական օրուայ վերաբերմամբ և առհասարակ ինչ կարծիքի են չոգնածութեան մասին հանդերձ նրանից առաջ եկած այլասեռման, ըստ Յադէկի:

Տեսնում էք, ամեն տեղ պահանջում են 8 ժամեայ բանուորական օր. դա բնական է և արդարացի, ըստ Յադէկի:

Բանուորը, որ քնից և աշխատանքից ի բաց ուրիշ բան չգիտէ, չի կարող կուլտուրական մարդ համարուել, որովհետև նա համարեա թէ անասնական կեանք է վարում. ազատ ժամանակը, որ նա խլում է իր քնից, վատնում է արբեցողութեան և անբարոյականութեան մէջ, որովհետև սօքա են միմիայն հնարաւորութիւն տալիս նրան մոռացութեան տալ մի քանի բոպէով իր չարքաշ կեանքը:

Սրդիւնաբերութեան պարզանալը, աշխատանքի բաժանման անելը և չափից դուրս լարուածու-

թիւնը օրէցօր շատացնում են այդպիսի բանուորների թիւը:

Այն ինչ՝ տնտեսական կեանքի նախընթաց շրջաններում, իսկ գիւղերում մինչև այժմս էլ, կեանքը դրուած էր այնպիսի պայմանների տակ, որ մարդս կարողանում էր ներդաշնակ կերպով զարգացնել և ամրապնդել իր մկանները, ջղերը և մարմնի ուրիշ անդամները, իսկ այժմ, շնորհիւ աստիճանաբար լառաչադիմող աշխատանքի բաժանման, գերակշռող տեղը բռնում է միմիայն որոշ մկանների և լանգամների զարգացումը: »

— Մարմինը, արդարացի նկատում է բժիշկ Յադէկ-ը, շնորհիւ միակերպ աշխատանքի, երկար ժամանակ ստիպուած է մնալ որոշ ուղղութեան մէջ, իսկ դրանից առաջ է գալիս մկանների չափից դուրս առածդականութիւն, ներքին գործարանների ճնշում, տեսողութեան չափազանց լարում և այլն և այլն:

Մարմնի մնացած գործարանները և մկանները շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք աշխատանքի ժամանակ մնում են անգործ հետզհետէ քայքայւում են: Յօդերի կապերը, ողնաշարը, կոնքի (տազի) ոսկորները, կրծքի վանդակը թուլանում են, իսկ սրանցից առաջանում է ամբողջ կազմուածքի ալլանդակութիւն և կորութիւն:

Ներքին գործարանները, ճնշուած լինելով, կորցնում են իրենց կենսունակութիւնը և գործում անկանոն:

Այդպիսի միատեսակ աշխատանքից առաջ

եկած վնասը անհետացնելու համար անհրաժեշտ է բաւարար հանդստութիւն, ազատ ժամանակ, որի ընթացքում խոնջած անդամները կհանգստանան, անգործները կվարժուեն, ճնշուած և ընդլայնացած մկանները, կապերը, ոսկորները և բոլոր ներքին գործարանները նորից կստանան իրենց սովորական դրութիւնը:

Դրա համար պէտք է որոշ ժամանակ լինել առողջ օդում, յանախ զբօսնել, լողանալ, թիափարել, խաղալ, կատարել զբօսանքներ սարերի վրայ, ման գալ վելոսիպէդով և այլն և այլն:

Բոլոր այս վարժութիւնները, ընդդիմադրելով միակերպ աշխատանքից առաջ եկած վնասին, տալիս են մարդու ֆիզիքական և հոգեւոր թարմութիւն ու կենսունակութիւն:

Վարժողութեան շնորհիւ արեան շրջանառութիւնը, շնչառութիւնը դառնում են կանոնաւոր, թոքերի վերին մասերը, որոնք սովորաբար հեշտ են վարակւում թոքախտով, ամրանում են, մարսողութիւնը փոխւում է դէպի լաւը, նեարդերի և կաշուի գործունէութիւնը, իսկ սրա հետ և քունը, կանոնաւորւում են:

Այս պատճառով վարժողութիւնը (սպօրտ) վերին աստիճանի մեծ նշանակութիւն ունի առողջութեան համար. ցաւալի է, որ մեզանում այդ բանը հասկացել են քչերը և սպօրտը քիչ է տարածուել. մասամբ դա բացատրւում է նրանով, որ մեր բանւորները զբաղուելու ազատ ժամանակ չունեն:

Ներկայումս առանձնապէս երկար հանգստու-

թիւն է պահանջում աշխատանքի չափազանց լարւածութիւնը:

Տեխնիկայի յառաջադիմութիւնը, մեքենաների բարդութիւնը և արագ շարժողութիւնը չափից դուրս մեծ պահանջ են առաջարկում բանուորին, այնպէս որ բանուորական օրուայ երկարութիւնը այժմս ունի բոլորովին ուրիշ նշանակութիւն, քան հարիւր տարի սրանից առաջ կամ մինչև անգամ նախընթաց սերնդում:

Յայտնի է, որ բոլոր արդիւնաբերական երկրներում աշխատանքի լարուածութիւնը (ինտենսիվնօստ) աճում է նոյն չափով, ինչ չափով պակասում է բանուորական օրուայ երկարութիւնը:

Անդդիան իր տասժամեայ բանուորական օրով, իսկ Ամերիկան աւելի ևս պակաս — պարզապէս ապացուցին, որ կարճ բանուորական օրը և բարձր օրավարձը վատ չեն ազդում կապիտալիստի շահերի վրայ. ընդհակառակ, շնորհիւ հէնց այդ կարճ օրուայ սահմանման և բարձր օրավարձին, նորա դեռօգուտ են ստանում, որովհետև այդ երկու պայմանները առաջ են բերում բանուորի մէջ եռանդ, թարմութիւն և աշխատելու մեծ ընդունակութիւն:

Բանուորների մկաններն ու նեարդերը և նախ կենդրոնական նեարդային սխտեման շնորհիւ մեթօդական վարժողութեան, հնարաւորութիւն են տալիս նրանց պարապել արտադրութեան աւելի բարձր մեքերով:

Հասարակական փաստ է դա, որ հնարաւոր է

եղել կազմել բանուորներէց մի այնպիսի խումբ, որը մեքենաների շարժողութեան և իր գործունէութեան մէջ հաստատել է որոշ չափակցութիւն:

Բժիշկ Շուլեր-ը ասում է. մեքենան պայմանաւորում է ղեկավարող բանուորի գործողութիւնների արտադրութեան չափը, որոշում է գործ դրած ոչժի քանակութիւնը:

Բայց մեքենայի յատկութիւնները յաճախ հանդիսանում են որպէս խոչնդոտներ, որոնց շնորհիւ բանուորը չի կարողանում երկար աշխատել, թէկուզ նա լարի իր բոլոր մտաւոր, հոգեւոր և ֆիզիքական ուժերը. մեքենան պահանջում է բանուորից ուժերի սաստիկ լարուածութիւն, թէկուզ բանուորը սարսափելի չուզնած լինի:

Եթէ, առաջ, բանուորական օրուայ կրճատումը բարձրացնում էր աշխատանքի արգասաւորութիւնը և այս պատճառով անմիջապէս դարկ էր տալիս արտադրութեան և կուլտուրայի յառաջադիմութեան, ուրեմն, կարող ենք ասել և հակառակը. աշխատանքի արգասաւորութիւնը պահանջում է բանուորական օրուայ կրճատում:

Ժամանակակից բանուորը միևնույն ժամանակամիջոցում աւելի մեծ եռանդ է գործ դնում, քան նախկինը, այդ պատճառով էլ համաձայն նեարդերի ուժգին լարուածութեան, նա աւելի շուտ է չոզնում և «ուժասպառ դառնում»:

Եվժիուէն և բոցեդէն մեքենայի առաջ մենք տեսնում ենք կիսամերկ, քրտնքի մէջ կորած մարդոց, որոնք ստիպուած են մնալ երկաթի և պող-

պատի այդ հսկայական կոյտերի շուրջը, որոնցից կայծեր են ցայտում դէպի օդը, արագ ու մեծ բռնադժեր կազմում, չորս կողմը շվից, զղրղիւն առաջացնում... և բնութեան այդ տխուր ու թշուառ թաղաւոր — բանուոր մարդուն վիճակւած է ընդմիշտ կապուած լինել մեքենայի հետ...

Ինչքան աշխատանքի լարուածութիւնը մեծ է, նոյնքան կարճ պիտի լինի բանուորական օրը, նոյնքան երկարատե պիտի լինի հանգստութեան ժամանակը, որովհետև անհրաժեշտ է, որ լարուած մկանները, նեարդերը և չոզնած ուղեղը կարողանան վերականգնեցնել առաջուայ թարմութիւնը և կազմուածքի ֆիզիքական ու մտաւոր հաւասարակշուրութիւնը,

ԺԱ.

Կասկած չկայ, որ պատահում են բազմաթիւ դէպքեր, երբ բանուորը մեռնում է վաղաժամ մահով, շնորհիւ երկարատե պարապմունքից առաջ եկած սրտի չափազանց լարուած գործունէութեան:

Յանկարծակի հիւանդութիւնների թւի մէջ մտնում են այն վէրքերը, որ բանուորները ստանում են աշխատելիս և ընդհանրապէս բոլոր այն դժբախտ դէպքերը, որ առաջ են գալիս արտադրութիւնից:

Այն արտադրութիւններում, ուր գոյութիւն ունի բաւականին երկարատե բանուորական օր, դժբախտ դէպքերի թիւը լինում է նոյնպէս մեծ,

օրինակ չրադացներում, դարեչրի և աղիւսի գործարաններում, նաւահանգիստներում, նաւը բեռնելու կամ ապրանքը դուրս հանելու ժամանակ:

Որ դժբախտ դէպքերի քանակութեան և բանւորական օրուայ երկարատեւութեան մէջ գոյութիւն ունի կապ, ասում է գօթթօր Յադէկ-ը, դա ամենապարզ կերպով ապացուցանում է մեզ պետական ապահովացման վարչութեան ստաստիկան Գերմանիայում վերաբերեալ դժբախտ դէպքերի դասաւորման բանուորական օրուայ զանազան ժամանակամիջոցներում:

Ստատիստիկան մեզ վկայում է, որ առաւօտեան աշխատանքի վերջին երեք ժամերը կրկնակի ծանր և աւելի զգալի են, քան առաջին երեքը, որ ճաշից յետոյ դժբախտութիւնների ամենաառատ հունձ տալիս է վերջին ժամը, այսինքն 5 — 6-ը: Դա պարզ է, ինչպէս լոյս:

Յողնած բանուորը նախազգուշութեան չափը չի պահպանում, նա դառնում է դանդաղ, անշարժ և անտարբեր դէպի վտանգը:

Արդիւնաբերութիւնը, ասում է Փօն-Բօրխտը, ստիպուած է երկարատե բանուորական օրուայ օգուտը ծախել դժբախտ դէպքերի վրայ որպէս վարձատրութիւն, իսկ անբախտ բանուորները կորցնում են իրենց կեանքը և առողջութիւնը:

Այն բոլորը, որ ասուած է արդիւնաբերութեան աշխատանքից առաջ եկած յանկարծակի հիւանդութիւնների մասին, վերաբերում է և ուրիշ արհեստակցական հիւանդութիւններին, որոնք

երևան են զալիս ոչ թէ յանկարծ, այլ դանդաղ և աննկատելի կերպով: Դա վերաբերում է նախ և առաջ այն հիւանդութիւններին, որոնք առաջ են զալիս արտադրութեան մէջ գործ ածած զանազան թունաւոր նիւթերից:

Ինչքան երկարատե է այդպիսի աշխատանքը, այնքան մեծ վտանգ է սպառնում նա, այնքան մեծ է նրա սարսափը շնորհիւ թոյնի երկարատե ազդեցութեան բանուորի կազմուածքի վրայ. երկար աշխատանքից յոգնած բանուորը հետզհետէ անուշադիր է դառնում և թունաւոր նիւթերի հետ վարում է անզգօյշ:

Առանձնապէս շատ է գործադրում սնդիկը, արճիճը, ցինկը, անիլինը (գործ է ածւում ներկարարութեան մէջ), ծծմբային ածխածին (ուետինի արտադրութեան մէջ), զանազան թթւութիւններ, օրինակ ծծրմբաթթու, բորակաթթու, գործ են ածւում նաև ածխածնի թթուածնատը (օկիս) և հանքային զաղը:

Այդ թոյներից մի քանիսը այնքան վտանգաւոր են, որ նոյն իսկ ութժամեայ բանուորական օրը արտադրութեան այդ ձիւղերում չափազանց երկարատե է թւում և միմիայն կարճատե բանուորական օրը կարող է ապահովացնել լուրջ հիւանդութիւնից:

Թէ ինչպիսի մեծ նշանակութիւն ունի այդպիսի դէպքերում բանուորական օրուայ կրճատումը դա պարզ ցոյց են տալիս սնդիկից առաջ եկած թունաւորութիւնները՝ լնդերքի ուռոցքը, ատամների ցաւը և դուրս ընկնելը, լուծումը, յաճախ

արիւնային փորհարութիւնը, ստամոքսի ցաւը և այլն և այլն:

Այս սարսափելի հիւանդութիւնները արտասովոր չափերով տարածուած էին Գերմանիայում ապակի արտադրող գործարաններում 80-ական թւականներում. բանուորների աւելի քան 80%<sup>0</sup>-ը տանջուած էր այդ հիւանդութեամբ:

Մնդիկից այլևս հիւանդութիւններ չափատահեցին, որովհետև 1889 թւականի օրէնքը, սահմանելով նոր առողջապահական կանոններ և վերացնելով միջնորդութեան սխտեման հանդերձ չափազանց երկար բանուորական օրով և փոքր օրավարձով, տնօրինեց, որ արտադրութեան այն ճիւղերում, ուր գործադրուած է սնդիկ, բանուորական օրուայ երկարութիւնը սահմանափակուի ծմեռութիւթ, իսկ ամառը վեց ժամով:

Ութ ժամեայ բանուորական օրը վերացրեց սրնդիկից առաջ եկած թունաւորութիւնները:

Վերոյիշեալ զանազան թոյներից առաջ եկած հիւանդութիւնների շարքում պիտի դնել և այն հիւանդութիւնները, որոնց պատճառն են վատառողջ բնակարանները հանդերձ խեղդուկ օդով, թունաւոր զաղերը, օրինակ՝ արտաշնչող օդի կազմային մասը, ածխածինը և ուրիշները:

Եթէ մի որեւիցէ անասուն զետեղել ածխածինով լցուած տարածութեան մէջ, նա շնչասպառ կլինի. նմանապէս, եթէ այդպիսի տարածութեան մէջ վառած մոմ դնենք, մոմը կ'հանգչի:

Իժմախտաբար անթիւ են այն դէպքերը, երբ

մարդս մեռնում է ածխածինից: Ամենից յաճախ դա պատահում է հանքահորերում, ջրհորներում, մառաններում և ուրիշ նման տեղերում:

Սրտի խառնելը, զլխացաւը, գլխապտոյտը և ուշագնացութիւնը, որոնք յաճախ պատահում են թատրօնների դահլիճներում և ժողովներում, ուր ժողովուրդը շատ է և օդը վատ մաքրած, նոյնպէս առաջ են գալիս ծանրացած ածխածինից:

Պրօֆեսօր Պետենկօֆեր-ի որոշմամբ առողջապահութեան համար անհրաժեշտ ածխածինի քանակութիւնը օդի մէջ մի հազարերորդ մասից աւելի չպիտի լինի:

Իւրաքանչիւր մարդ կարող է մի ժամուայ ընթացքում հանգիստ դրութեան ժամանակ արտաշնչել 20 խորանարդ մետր ածխածին, աշխատելիս կրկնակի քանակութիւն, ուրեմն, տասժամեայ բանուորական աշխատանքի ընթացքում իւրաքանչիւր բանուոր արտաշնչում է չորս հարիւր խորանարդ մետր ածխածին:

Սրան պիտի աւելացնել և այն, որ բոցը նոյնպէս արտադրում է ածխածին. մի զազային եղջուրի բոցը չորս անգամ աւել է արտադրում քան բանուորը:

Պարզ է, թէ ինչպէս աշխատանքի իւրաքանչիւր աւելորդ ժամը վատառողջ է դարձնում օդը և վնաս է տալիս բանուորներին:

Ուշադրութիւն պէտք է դարձնել նաև շինութիւնների վերին աստիճանի վատ օդամաքրութեան վրայ, օդի վրայ, որը ծանրանում և վնասակար է

դառնում շնորհիւ կաշուի և դագերի արտադրութեան, խոնաւ և կեղտոտ հագստի, ծխախոտի, ուտելիքէնների և վերջապէս ոգելից բմպելիքների ու զանազան բանուորական նիւթերի հոտի շնորհիւ:

Օգի այս դրութիւնը աւելի ևս վատթարանում է շնորհիւ այն հանգամանքի, որ շատ գործարաններում տիրում է խոնաւութիւն և բարձր շերմութիւն:

Եթէ այս բոլորը ուշադրութեան առնենք, մեզ համար առանց երկար բացատրութիւնների, պարզ կլինի թէ այդպիսի դրութիւնը ինչ մեծ վտանգ է սպառնում բանուորի շնչառութեանը և արեան շրջանառութեանը, թէ ինչ զանազանութիւն կայ 8 և 12 ժամերի մէջ, թէ պէ՞տք է մնայ արդեօք բանուորը այն շինութիւնների մէջ, ուր օդը ծանր, խեղդուկ և լի է զանազան թունաւոր գազերով և գոլորշիով:

Միայն այն ժամանակ բանուորը կարող է պահպանել իրեն հիւանդութիւններից, երբ կսահմանուի կարճ բանուորական օր, երբ նա հնարաւորութիւն կունենայ մի քանի ժամ ազատ լինել, դուրս գալ թարմ օդ ծծելու և դրօսանքի ու մարմնամարզութեան շնորհիւ, զանազան հիւանդութիւնների առաջն առնել, ի թիւս որոց ամենասարսափելիներից մէկի — թոքախտի և ուժասպառութեան:

ԺԲ.

Բանուորական օրուայ երկարութիւնը գուցէ աւելի ևս վտանգալից է շնորհիւ փոշու, որի քանակութիւնը չափազանց մեծ է գործարաններում: Վատառողջ օդը և փոշու ներս շնչելը թոքային հիւանդութիւնների զլխաւոր պատճառներն են, մանաւանդ «պրօլետարների հիւանդութիւնների» — թոքախտի:

Մեր կազմուածքը, իրաւ է, ունի այնպիսի չարմարութիւններ, որոնք որոշ չափով արգելում են փոշու մտնելը թոքերի մէջ. այդ նպատակին են ծառայում քթի և կոկորդի խոռոչի մածուցիկ տարածութիւնները:

Նրանք, որ ստիպուած աշխատում են փոշու մէջ, աշխատանքից չետոյ հաղալով և թքելով արտադրում են փտած փոշու մեծ քանակութիւն:

Բայց այդ չարմարութիւնների նշանակութիւնը բաւականին սահմանափակ է. աշխատանքի սկզբներում նրանք գործում են լաւ և մեծ ընդդիմադրութիւն են ցոյց տալիս փոշուն, բայց չետոյ, երբ իւրաքանչիւր ժամում ներս թափանցող փոշու քանակութիւնը շատանում է, նրանց գործունէութիւնը անբաւարար է դառնում:

Երբ քիթը լցւում է փոշով և շնչառութիւնը անհնարին է դառնում, բանուորը շնչասպառ չլինելու համար ստիպուած է բանալ բերանը և շնչել նրանով:

Ահա այդ կերպով շնչառութեան գործարանները և թոքերը դառնում են անոյժ և հետևաբար անկարող, կռուել մօտեցող թշնամու հետ:

Կազմուածքի թունաւորումը փոշուց, աճում է ժամ առ ժամ. առանձնապէս կորստաբեր է այն փոշին, որ առաջանում է հանքերի՝ և մետաղների սրածայրերից (քար տաշելիս, փայտ կտրելիս) կամ ուրիշ սուր առարկաներից, օրինակ՝ շէտիճայից, մազերից, փետուրներից, բամբակից և այլն:

Այդ փոշու ներս ընդունելը առաջ է բերում շնչառութեան գործարանների զրգռում, թոքային վէրքեր ու այդպիսով հնարաւորութիւն է տալիս թոքախտի հեշտ զարգանալուն:

Թոքախտի մասին շատերը հասկացողութիւն ունեն, բայց պէտք է հասկացողութիւն ունենալ նաև մարմնի դրութեան մասին, աշխատանքի ժամանակ:

Բանուորական օրուայ կրճատումը մեծ նշանակութիւն ունի այն արհեստներում, ուր բանուորը բոլոր աշխատանքի ընթացքում ստիպուած է պահել իրեն որոշ, միակերպ դրութեան մէջ:

Ամեն տեղ, ուր բանուորը ստիպուած է կանգնել երկար ժամանակ, աշխատանքի հետևանքը լինում է այն, որ շնորհիւ երակների (վենա) լայնացման և բորբոքման, արիւնը կանգ է առնում ոտքերում և երեւան են զալիս ոտքի ուռուցքներ:

Վերջապէս պատահում են վէրքեր ծնկներում և ընդհանրապէս առաջ են զալիս ոտքերի այնպիսի հիւանդութիւններ, որոնք չնայելով երկար և յա-

մառ բժշկութեան, նորից նոր շարունակում են իրենց քայքայիչ ներգործութիւնը և այդպիսով դժբախտ տառապելիներին դարձնում են ինվալիդ—գուրկ ամեն մի գործ շինելու ընդունակութիւնից:

Եթէ այդպիսի հիւանդութիւններ վերաբերում են երեխաներին, որոնց օսկորները աւելի ևս ճկուն են, նրանք երկար կանգնելուց ստանում են ոտքերի և ուրիշ գործարանների վնասակարութիւններ, մանաւանդ երբ երեխաները ստիպուած են վերցնել ոչժից վեր ծանր սաւականեր. օրինակ՝ այդպիսի դէպքերում ոտքերը դառնում են կամ տափակ կամ ծուռ, ողնաշարը նոյնպէս ծուռւմ է, կոնքը (տաղը) լայնանում:

Երկար նստելը թոյլ չի տալիս որ կրծքի վանդակը կանոնաւոր կերպով լայնանայ և ճնշում է փորի խոռոչը:

Ստամոքսի ցաւը, մարսողութեան խանգարելը, խրօնիքական փորկապութիւնը, փորի զանազան մասերում արեւան շատանալը, սեռական շրջանի գործունէութեան խանգարուելը, մանաւանդ կանանցը, նմանապէս թոքերի անբաւարար գործունէութիւնը, այսինքն անկանոն շնչառութիւնը, բոլորը միասին վերցրած երկարատեւ, նոտակեաց դրութեան անխուսափելի հետևանքներն են:

Սրանից է առաջ զալիս դերձակների և դերձակուհիների թոքային հիւանդութիւնները: Տնային արտադրութիւնը, ուր չափազանց երկար բանուոր-

րական օրուայ հետ միանում է և նստակեաց դրու-  
թիւնը, նոյնպէս զերծ չէ այս չարիքներից:

Այն արհեստներում, ուր զլխաւորապէս գործ  
են տեսնում որոշ մկաններ, կամ մկանների որոշ  
խմբեր (օրինակ՝ դրագրների, հեռագրատան ծառա-  
չողների, դաշնամուրի վրայ նուագողների, դրա-  
շարների, փորագրողների, ծխախոտ պատրաստող-  
ների, լւացարարների և այլն), չափից դուրս աշ-  
խատանքը առաջ է բերում ձեռքի թաթի և ամ-  
բողջ ձեռքի ցնցումներ, որից յետոյ անհրաժեշտ է  
դառնում փոխել պարապմունքը:

Տեսողութեան չափազանց երկար լարուածու-  
թիւնից (օրինակ՝ փորագրողների, դրամ կտրողների,  
ոսկերիչների, դերձակների, և այլն) աչքերը կրկնա-  
կի չօգնում են, յարմարումը (ակկօմօդադիա) խան-  
գարում է, սրտեսուութիւնը թուլանում է և ա-  
ռաջ է գալիս կարճատեսութիւն:

Երկար և ծանր աշխատանքից առաջ է գալիս  
աղեթափութիւն, (զրիժա) սրտի ընդլայնումն հան-  
գերձ իր բոլոր վատ հետեւանքներով:

Միայն այն ժամանակ կարելի է այս հետեւանքնե-  
րի և հիւանդութիւնների առաջն առնել, երբ մար-  
մինը դուրս կգայ այդ անբնական միակերպ դրու-  
թիւնից, երբ յոգնած դործարանը բաւականին կը  
հանգստանայ, իսկ աշխատանքի ժամանակ պարապ  
կամ անզորժ մնացած դործարանները բաւականին  
կվարժուեն. միայն այսպիսով կարելի է չարիքնե-  
րի առաջն առնել:

Ինչքան մեծ վտանգ է սպառնում աշխատանքը

բանուորի առողջութեան, այնքան երկար պիտի  
լինի նրա հանգստութիւնը և ազատ ժամանակը.  
այնքան շուտ պիտի կրճատել բանուորական օր  
ւայ երկարութիւնը: Այն ինչ, շատ արհեստներում  
բանուորը գտնում է բազմազան կորստաբեր պաշ-  
մանների և ազդեցութիւնների տակ:

Օրինակ՝ դրաշարը, ստիպուած է ոչ թէ միայն  
գործ ունենալ թունաւոր արձնի հետ, այլ և միշտ  
ոտքի վրայ կանգնել, շնչել թունաւորուած օդ, աշ-  
խատել այնտեղ, ուր օդամաքրութիւնը և լուսա-  
ւորութիւնը անբաւարար են և չափից դուրս լա-  
րել իր ուշադրութիւնը և տեսողութիւնը:

Երկար բանուորական օրուայ ուրիշ վատ հե-  
տեւանքներից մէկն էլ ալկոհոլն է. նա մեծ վնաս է  
տալիս բանուորին, դրա մասին արդէն խօսել ենք:

Ալկոհոլիզմը և երկար բանուորական օրը ի  
ներքուստ կապուած են միմիանց հետ. աշխատելով  
աւել, քան իր ոյժերը թոյլ են տալիս, մարդս  
ընկնում է վատ դրութեան մէջ և ահա այդ դրու-  
թիւնը մոռացութեան տալու համար նա գործ է  
ածում ալկոհոլ:

Ալկոհոլամոլը աշխատում է հաւատացնել ի-  
րեն, որ նոր ոյժ ստանալու համար, ցրտից և տա-  
քութիւնից պաշտպանուելու համար, անհրաժեշտ է  
գործ ածել ալկոհոլ. նրա կարծիքով յոգնած մկան-  
ների և լարուած նեարդերի հանգստութեան հա-  
մար դարձեալ պէտք է ալկոհոլ գործ ածել:

Իայց, աւանդ, հետեւանքները հակառակն են  
ցոյց աալիս. բանուորի կազմուածքը միանգամայն

քայքայւում է և ինչքան նա շատ է խմում, այնքան շուտ է սնանկանում հոգեպէս և ֆիզիքապէս:

Փոխանակ հանգստութեան և քնի, նա իրեն տրուած կարճ ժամանակը վատնում է այս կամ այն կեղտոտ և աղմկալից թէչարանում. նա ընդունակ չէ լաւացնել իր աշխատանքի պայմանները, որովհետեւ բթանում է հոգեպէս և կորչում ֆիզիքապէս:

Ամեն տեղ, ուր մենք տեսնում ենք բանուորական օրուայ կրճատում, նկատելի է և ալկոհոլի դործածման հետզհետէ չքացումն: Ուշադրութեան արժանի է այն դէպքը, որ տեղի ունեցաւ Վիկտորիայում (Աւստրալիա), ուր պանդոկատէրերը դուրս եկան ընդդէմ ութժամեայ բանուորական օրուայ համար մղած ազիտացիայի և միահամուռ կերպով բողոքեցին նրա ներձուծման և հաստատման դէմ:



Վ Ե Ր Չ Ա Բ Ա Ն

Այսպէս ուրեմն, չափազանց երկարատե աշխատանքից առաջացած վնասները հետևեալներն են՝

- 1) Ընդհանուր սննդի խանգարումն, 2) առանձին դործարանների և մկանների, ի թիւս որոց և սրտի մկանի կրկնակի յոգնածութիւն, 3) ինքնապահպանութեան ինստինկտի նուազումն, (անզոյզ վերաբերմունք թոյնների հետ և այլն):

Երկարատե բանուորական օրուայ այս աղղեցութիւնները աւելի արագ են երևան գալիս 1) երբ աշխատանքը աւելի յոգնեցուցիչ և վնասակար է առողջութեան համար, 2) երբ մարդուս կազմաւածքը, լինելով աւելի ջահել և թույլ, քիչ ընդունակութիւն է ցոյց տալիս ընդդիմադրելու վնասակար աղղեցութիւններին, 3) երբ աշխատանքի մնացեալ պայմանները և բանուորների սօցիալական չրութիւնը քիչ են ապահովուած:

Այստեղ մեծ նշանակութիւն ունեն նաև մարդուս անձնական սովորութիւնները. օրինակ՝ մաքրասիրութիւնը, զրդուիչ միջոցների դիմելը (ալկոհոլ) և ընդհանրապէս նրա կենցաղավարութիւնը: Մահաբերութեան թուերի վերաբերեալ անզոյտացոյց ստատիստիկան ցոյց է տալիս, որ 70-ական թուականներում բանուորների կեանքի երկարատե-

ուութիւնը հաւասար էր 38<sup>1</sup>/<sub>2</sub> տարուայ, իսկ երբ 1872 թ. բանուորները պահանջեցին որ բանուորական օրը դառնայ 9-ժամեայ, բանուորի կեանքի միջին երկարատևութիւնը 17 տարուց յետոյ, այսինքն 1889 թ. դառաւ 48<sup>1</sup>/<sub>4</sub> տարի:

Ուրեմն, 9-ժամեայ բանուորական օրը իւրաքանչիւր բանուորի կեանքը միջին թուով աւելացրեց տաս տարով:

Սհա այն պատճառները, որոնց շնորհիւ բանուորը մեռնում է մատաղ հասակում, երբ մարդս, դառնելով նօրմալ պայմաններում, աւելի թարմ ու առողջ է և կրում է իր մէջ ամենամեծ եռանդ և ոյժ:

Աշխատանքը, որ մարդուս կազմուածքի փրկարար պահանջն է կազմում, շատերի համար անէճք է դառնում:

Ոչ մի մարդ առանց ուշադրութեան արժանի պատճառի չի ցանկանայ, որ իր ձին կամ ուրիշ անասուն ութ ժամից աւել աշխատի, որովհետև նա գիտէ որ հակառակ դէպքում կկորցնի նրանց և հետևաբար այն դրամը, որ նա ծախսել էր նրանց վրայ:

Իսկ եթէ մէկը գործ ունի բանուոր մարդու հետ, նա յաճախ անցնում է բնական սահմանները, ստիպելով բանուորին աշխատել իր ընդունակութիւնից և ոյժից վեր:

Իայց ժամանակակից բանուորները (ընդհանրապէս բոլոր աշխատող մասսան) նման չեն այն հին դարու ստրուկներին, որոնք լուռ ու մունջ

կատարում էին ամեն բան. ներկայումս բանուորները հետզհետէ հասկանում են իրենց դրութիւնը և գիտեն, որ իրենց տնտեսական շահերի պաշտպանման մէջ պիտի լինեն համերաշխ:

Նետոյսեալ պարզ է լինում նրանց համար այն միտքը, որ միմիանցից հեռու և անկապ մնալով, նրանք անոյժ են, իսկ միանալով և կազմակերպւելով, կազմում են մի այնպիսի անխորտակելի ոյժ, որին չեն կարող յաղթել ոչ կապիտալիստները և ոչ էլ պետութիւնը:

Պահանջելով, որ բանուորական աշխատանքի շահագործմանը վերջ դրուի, բանուորները ոչ թէ միայն հնարաւորութիւն կտան աշխատելու այն հազարաւոր մարդոց, որոնք ստիպուած են պարապ և քաղցած մնալ, նրանք ոչ թէ միայն կրնոյատեսեն տեխնիկայի աւելի բարձր զարգացման, փոխարինելով արտադրութեան հին ձևերը նոր ինտենսիվ աշխատանքով, այլ և կ'ապահովացնեն մարդկային սեռի առողջութիւնը, կ'երկարացնեն իրենց կեանքը, աշխատելու աւելի ընդունակ կդառնան և կ'բարեփոխեն իրենց կանանց և երեխաների գոյութեան պայմանները:

Իսկ այդ բոլորը մեծ նշանակութիւն կունենայ մարդկային ցեղի կատարելագործման համար, որովհետև երկարատև աշխատանքից առաջացած վնասը վերաբերում է ոչ թէ միայն առանձին անհատներին, այլ կորստաբեր է և ամբողջ մարդկութեան համար:

Մայր-բանուորուհիները երկար բանուորա-

կան օրուայ շնորհիւ հնարաւորութիւն չունեն խնամելու և սնունդ տալու իրենց երեխաներին. դա է պատճառը որ բանուոր դասակարգի երեխաները մեռնում են վաղաժամ և այդպիսով հազարաւոր ծաղիկ հասակներ անժամանակ զերեզման են մտնում:

Ութժամեայ բանուորական օրուայ մէջ առողջապահական տեսակէտից նշանակութիւն ունի նաև աշխատանքի դադարեցումը շաբաթ օրերը, կէսօրից չետոյ:

Թէ ինչքան մեծ է այդ նշանակութիւնը, դա պարզ ցոյց է տալիս անբախտութիւնների այն սարսափելի քանակութիւնը, որ պատահում է ինչպէս ասացինք, բանուորական շաբաթուայ այս վերջին ժամերում:

Այդ ժամերը աւելի ևս մեծ նշանակութիւն ունեն կանանց համար, որովհետև այդ ըուպէներում նրանք կարող էին մաքրել ու կարգի բերել տունը, իսկ կիրակի օրը հանգստանալ:

Երկար բանուորական օրը, խոչնդոտ հանդիսանալով երիտասարդ բանուորների (երկու սեռի) զարգացմանը, արդելելով կազմուածքի կանոնաւոր սնունդը, անկարող լինելով կռուելու զանազան հիւանդութիւնների ու արտադրութեան մէջ գործածուող թոյների դէմ, ամէնուրեք տարածում է սարսափելի հիւանդութիւններ (տուբերկուլոզ, վեներական հիւանդութիւններ և այլն) և հազարաւոր մարդոց զրկում է առողջ երեխաների արտադրութեան և անեցման հնարաւորութիւնից:

Առաջ բերելով նեարդերի քայքայումն, հոգեկան

հիւանդութիւններ, բթամտութիւն, ալկոհոլամոլութիւն և ընդհանրապէս շղային և հոգեկան հիւանդութիւններ, չափից դուրս նրկար բանուորական օրը պատճառ է դառնում ամլութեան կամ անկենսունակ սերնդի արտադրման. այդ հանգամանքի շնորհիւ մարդկային ցեղը հետզհետէ այլասերւում է:

Առողջապահութեան միջազգային համաժողովում, որ տեղի ունեցաւ 1894 թ. Բուդապէշտում միտձայն ընդունուեց հետևեալ վճիռը. «Աչքի առաջ ունենալով բանուորական օրուայ կրճատման օգուտը և զիշերային աշխատանքի վնասը, մենք ընդունում ենք ութժամեայ բանուորական օր և զիշերային աշխատանքի վերացումն»:

Շուտով կանցնի մի դար այն ժամանակց, երբ յայտնի դերձանացի բժիշկ Գուֆելեանդ առաջինը առաջարկեց հետևեալ պահանջը.

„Ութ ժամ աշխատանքի համար,  
Ութ ժամ քնի համար,  
Ութ ժամ ազատ:“

Բանուորական օրուայ կրճատման համար մղած կռիւը ազգի զերազոյն բարիքների ձգտման ժողովրդի բարօրութեան, նրա առողջութեան պահպանման և բարձրացման կռիւն է:

Արդեօք ե՞րբ կհասկանաս, որ ժողովրդին ծաւալողները միմիայն նրանք են, ովքեր կուռում են ճնշողների և հարստահարողների դէմ...

Մտի՛ր այդպիսի մարտիկների շարքերի մէջ...

Եւ դու կմտնես . . . բայց ե՛րբ, ե՛րբ կհասկա-  
նաս այդ բանի կարևորութիւնը:

Իրքոյկիս մէջ զետեղուած նկարի գաղափարը  
թող լինի քո նշանաբանը:

Պրօլետարիատը, աշխատաւոր գիւղացիու-  
թիւնն ու աշխատաւոր սօցիալիստական ինտելի-  
գենցիան լաւագոյն ապագայ ստեղծելու նպատա-  
կով, անխուսափելի կռւի ժամանակ եղբայրաբար  
ձեռք-ձեռքի տալով կազմում են մի հզօր՝

«Մուրճի, Արօրի և Մտքի միութիւն . . .»:

ԵՐԿՈՒ ԽՕՄԲ:

Դուժան, որին ժողովուրդը ուղղում է իր ա-  
ղերսը և որի վրայ դրել է յօշար, պէտք է լաւ  
կատարի իր պարտականութիւնները:

Դուժան ինքն ըստ ինքեան ոչինչ չի ներկա-  
յացնում, բայց երբ սերտ կապուած է ժողովրդի  
հետ, ունի անազխն ոյժ և նշանակութիւն:

Մեծ անբախտութիւն կլինէր ժողովրդի հա-  
մար, եթէ Դուժայի կապը նրա հետ արտայայտ-  
ւէր միմիայն «կաշտպանենք, կաշտպանենք»  
խօսքերով, որ լսւած էին պատգամաւորները ճա-  
նապարհ ուղեւորուելիս:

Սյդպիսի խօսքերով ժողովուրդը ուղեկցում  
էր և առաջին Դուժայի անդամներին, բայց տէրու-  
թիւնը ցրեց Դուժան:

Ի հարկէ, այդ դէպքում մեղաւոր էին մա-  
սամբ և պատգամաւորները, որ չկարողացան ու-  
շագրաւ անել ժողովրդին ու ցոյց տալ իրենց ար-  
ժանաւորութիւնը, որպէս ժողովրդի ներկայացու-  
ցիչներ՝ ի պատասխան Դուժայի արժակման:

Բայց զլիաւոր դեր կատարողը եղաւ ժողովրդի  
կազմակերպման բացակայութիւնը:

Խօսելով ժողովրդի կազմակերպման մասին Դուժաչի շուրջը, պէտք է աչքի առաջ ունենալ երկու բան. նախ՝ մտքերի կազմակերպումն, որպէս հոգեբանական ոյժի և ապա՝ ժողովրդական մասսայի կազմակերպումն, որպէս իրական ոյժի, որ պատրաստ է պէտք եղած ժամանակ պաշտպանել իր հաւատարմատուին — Պետական Դուժաչին, կարելի եղած միջոցներով:

Մի հոգևով միանալու և համախմբելու համար, անհրաժեշտ է, որ երկու ոյժերը միասին լինեն: Մի ոյժ առանց միւսի անկարելի է:

Պետք է լայնացնել կուսակցական կազմակերպութիւններ, պրօֆեսսիօնալ և զիւղացիական միութիւններ, զարգացնել աստիճանաբար այդ կազմակերպութիւնները և բացի այդ օգտուել այն բոլոր հանգամանքներից, որոնք նպաստամատուց կլինեն նոր ընկերութիւններ կազմելու:

Պէտք է շուտ կազմակերպել մասսան. ժամանակը անցնում է, թող վերջին դառն պատմական դասերը մեզ խրատ լինեն, թող օրինակ ժառանգեն հայ-թրքական կոտորածները:

Ընդհանուր վտանգի ժամանակ համաձայնութիւն է կայանում և այն կուսակցութիւնների մէջ, որոնք իրենց ծրագրի սկզբունքով և տակտիկայով միմիանցից խիստ զանազանուում են:

Այստեղ, ի հարկ է, չի կարող հարց ծագել սեպհական համոզմունքների փոփոխման մասին. այսօրուայ պաշտպանը վաղը հակառակորդ կարող է դառնալ:

Բայց պէտք է հնարաւորութիւն ունենալ ապրելու մինչև վաղը. անհրաժեշտ է միութիւն. գործել հակառակ այդ միութեան, առաջ բերել ներքին կռիւ և խռովութիւն՝ դա նշանակում է հասարակութեան և պատմութեան առաջ սփրազործ դառնալ:

Վերջին ընտրութիւնների ժամանակ մի քանի տեղերում կազեաների բլօկը աշակողմեանների հետ մեծ յաղթութիւն տարաւ:

Մենք պէտք է հետևենք լաւագոյն ռուս գործիչներին և ապրենք եղբայրաբար մեզ շրջապատող ազգութիւնների հետ, որպէս զի մեր մեծ հայրենիքի արժանաւոր որդիք կարողանանք համարուել:

Կազմակերպուէր, ինչով կարող ես. միմիայն դրանով կապահովես քո քաղաքական և տնտեսական ազատութիւնը. կռիւը զարհուրելի է և ուժեղն է ձեռք բերում իր իրաւունքը:

Յաջողութիւն և մեր ներկայացուցիչներին, որ կարողանան ձեռք բերել ընդհանուր ազատութիւն և իւրեանց ազգային պահանջները:

Ազատութիւն և հող . . .



ԲՓ. Ա. ԲՈՒԳՈՒՂՆԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Եռաչին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.)	5	կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ	5	»
3. Ինչ է սիֆիլիսը	5	»
4. Առողջապահական զրոյցներ	5	»
5. Ինչ է ժուժկալութիւնը	5	»
6. Ինչ է անառակութիւնը	5	»
7. Վններական ախտեր	5	»
8. Աշակերտի առողջապահութիւն.	2	»
9. Մեր նեարդերը	10	»
10. Սիֆիլիս (բարեփոխուած)	10	»
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10	»
12. Գեղձախտ (զօլօտուխտ)	10	»
13. Ո՛վ է յանցաւորը	15	»
14. Կարիք և բարեգործութիւն.	15	»
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15	»
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ	15	»
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով)	20	»
18. Առողջապահական նուէր նորատի կանանց	20	»
19. Կինը և տղամարդը	15	»
20. Վերաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5	»
21. Ինչ է կաշու հիւանդութիւնը.	15	»
22. Երիտասարդութիւն և ծերութիւն.	15	»
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին.	20	»
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի)	20	»
25. Ստամոքսի կատարը	20	»
26. Քուն և երազ (մի պատկերով)	25	»
Մեծագիր պատկեր «Քուն և երազ» առանձին	10	»
27. Գործարան թէ երկրագործութիւն.	15	»
28. Մնապաշտութիւն ու կախարդութիւն	20	»
29. Մտերմական խորհրդ. պատանիներին (օնանիղմ)	20	»
30. Գոյութեան կոիւ	20	»
31. Ռուբլի Վերխով	25	»
32. Սէր և խանդ (մի պատկերով)	20	»
33. Անառակութիւն և պոռնկութիւն.	20	»
34. Նուէր հայ զինուորին.	20	»
35. Նուէր հայ վարժապետին (զպրօցական առողջապահութիւն).	20	»
36. Նուէր հայ զպրօցականին (Մեր օրերը)	10	»
37. Աւթժամայ բանուորական օր (մի պատկ.)	10	»

Գ Ի Մ Ե Լ՝ Թիֆլիս Կենդրոնական և Գուտաենքերը  
Գրափանառանոցները:  
Պահեստը գտնոււմ է Պետերբուրգ.  
«Պուշկինեան Արագատիպ» Լէշտուկով փ. տ. 4.

«Ազգային գրադարան



NL0199234

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.